ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Միրզոյան,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 109-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը: Սույն հարցով հիմնական զեկուցող նշանակել Ազգային ժողովի պատգամավոր Սուրեն Գրիգորյանին:

Կից ներկայացվում են՝

- Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը,
- Խմբակցության որոշումը Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու մասին,
- նախագծի ընդունման հիմնավորումը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 93 թերթ:

Հարգանքով՝

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ

18.09.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու մասին

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 109-րդ հոդվածի 4-րդ կետը, Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցությունը իր

2019 թվականի սեպտեմբերի 16-ի նիստում

ՈՐՈՇԵՑ

Ազգային ժողովին ներկայացնել Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ (ԱՆԴԱՄ) ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Սույն որոշումն ընդունելու նպատակը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում ընթացող իրավական գործընթացների թափանցիկության երաշխավորումը և դատարանի նկատմամբ վստահության ապահովումն է:

Նախագծի ընդունումը թույլ կտա ՀՀ Ազգային ժողովին Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հարցը ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված կարգով դարձնել Սահմանադրական դատարանի քննության առարկա:

Նախագծի հիմքում ընկած փաստական հանգամանքների և դրանց իրավական վերլուծությունն առկա է ներկայացված որոշման նախագծի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ (ԱՆԴԱՄ) ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է __.__._____

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով, 97-րդ հոդվածի 1-ին մասով, 109-րդ հոդվածով, դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով:
2. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով ՀՀ Ազգային ժողովի դիմումը (Հավելված 1) սույն որոշման անբաժանելի մասն է:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան պողոտա 10, 0019)

Դիմող՝ Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողով
(հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, 0095 Մարշալ Բաղրամյան 19)

ԴԻՄՈՒՄ

(Էական կարգապահական խախտում կատարելու հիմքով ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ)[1] Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ)

Բա՛րձր դատարան,

Օգտվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 83-րդ հոդվածի 1-ին մասով ընձեռված իրավունքից՝ ներկայացվում է **ՀՀ Սահմանադրական դատարանի** ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման **(այսուհետ՝ Աշխատակարգային որոշում)** հիման վրա վարույթ ընդունված

[1] Հաշվի առնելով, որ սույն դիմումի ներկայացման պահին տարբեր մասնագետների կողմից տարբեր կարծիքներ են արտահայտվում «սահմանադրական դատարանի դատավոր» և «սահմանադրական դատարանի անդամ» եզրույթների և դրանց փոխհարաբերության վերաբերյալ՝ ՀՀ Ազգային ժողովը չի ցանկանում այդ հարցով կարծիք արտահայտել **սույն փաստաթղթով**, ուստի, սույն դիմումի շրջանակներում տարաբնույթ մեկնաբանություններից և շահարկումներից խուսափելու նպատակով, «սահմանադրական դատարանի անդամ» և «սահմանադրական դատարանի դատավոր» եզրույթները կօգտագործվեն որպես հոմանիշներ:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

գործի **(այսուհետ՝ Գործ կամ Վարույթ)** քննության ընթացքում թույլ տրված էական կարգապահական խախտում կատարելու հիմքով ՀՀ Սահմանադրական դատարանի **(այսուհետ՝ ՍԴ, Դատարան կամ Սահմանադրական դատարան)** անդամ Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ դիմումը **(այսուհետ՝ Դիմում)**:

I. <u>ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔԸ</u>

1.1. 21.06.2019թ. Սահմանադրական դատարանի կողմից կայացվել է թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշումը, որով Սահմանադրական դատարանը որոշել է քննության ընդունել Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի դիմումը **(այսուհետ՝ Ռոբերտ Քոչարյանի դիմում)**, որով վերջինս խնդրում է Սահմանադրական դատարանին որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135 հոդվածի 2-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանելու հարցը:

1.2. Նույն օրը կայացվել է նաև թիվ ՍԴԱՈ-60 առանձին աշխատակարգային որոշումը, որով Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը հեռացվել է Վարույթից՝ դրան մասնակցելու անհնարինության հիմքով:

1.3. Չնայած գործի հասարակական մեծ հնչեղությանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ և 68-րդ հոդվածի 7-րդ մասերի՝ Սահմանադրական դատարանի կողմից կայացվել է որոշում գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

1.4. Սահմանադրական դատարանը որոշել է նաև Օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով Գործով որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

1.5. **Աշխատակարգային որոշման մեջ չի նշվել որևէ դատավորի՝ գործին մասնակցելու անհնարինության մասին, ինչպես նաև չի նշվել՝ արդյոք դատավորներից որևէ մեկի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցն առհասարակ քննարկվել է, թե ոչ:**

1.6. Աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը որպես գործի դատաքննության սկիզբ նշանակել է 2019 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 10:00-ին:

1.7. 28.08.2019թ. Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը Ալվինա Գյուլումյանին, Արևիկ Պետրոսյանին, Հրանտ Նազարյանին, Ֆելիքս Թոխյանին, Աշոտ Խաչատրյանին, Հրայր Թովմասյանին, Արայիկ Թունյանին և Արման Դիլանյանին ուղարկել է գրություն, որում նշել է իր դիրքորոշումը դատավորներ Հրանտ Նազարյանի, **Հրայր Թովմասյանի** և Արևիկ Պետրոսյանի Գործի քննությանը մասնակցելու անհնարինության վերաբերյալ[2]:

1.8. 28.08.2019թ. Սահմանադրական դատարանի կողմից կայացվել է Գործի դատաքննությունը սկսելու ժամկետը հետաձգելու մասին թիվ ՍԴԱՈ-89 աշխատակարգային որոշումը, որով Սահմանադրական դատարանը որոշել է Գործի դատաքննությունը սկսելու ժամկետը 2019 թվականի օգոստոսի 29-ի ժամը 10:00-ից հետաձգել 2019 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 11:00-ին:

1.9. 03.09.2019թ.-ին սկսվել է Գործով դատաքննությունը և նույն օրը Դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ, որտեղից վերադարձել է 04.09.2019թ. և Հրայր Թովմասյանի կողմից հրապարակվել է թիվ ՍԴՈ–1476 որոշման **(այսուհետ՝ Որոշում)** ներածական և եզրափակիչ մասերը:

---

[2] Այս պնդման համար հիմք է հանդիսանում դատավոր Վահե Գրիգորյանի կողմից հրապարակված նամակը, և նշվածի հերքումը որևէ ձև չի ներկայացվել Սահմանադրական դատարանի կողմից:

1.10. 06.09. 2019թ Սահմանադրական դատարանի կայքում հրապարակվել է ՍԴՈ–1476 որոշումն ամբողջությամբ, **որում ևս բացակայում է անդրադարձը Հրայր Թովմասյանի կողմից գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցին և որոշումը ստորագրված է վերջինիս կողմից:**

1.11. Գործով զեկուցող դատավորներից հատուկ կարծիք ներկայացրած դատավորը պարոն Ֆելիքս Թոխյանը վկայակոչել է, որ համոզված է, որ Բարձր դատարանը կգար այլ եզրահանգման, եթե չցուցաբերվեր որոշակի շտապողականություն՝ այս բարդ և մեծ հանրային հնչեղություն ունեցող խնդրի հետ կապված:

II. <u>ԱՌԿԱ ԵՆ ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐ</u>

2. <u>Ազգային ժողովը գտնում է, որ առկա էր ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման հիման վրա վարույթ ընդունված գործի քննությանը Սահմանադրական դատարանի անդամ Հրայր Թովմասյանի մասնակցելու անհնարինության հիմք, պայմանավորված վերջինիս Գործով դիմումատու Ռոբերտ Քոչարյանի ներկայացուցիչ Արամ Օրբելյանի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունենալու հանգամանքով:</u>

➢ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՀԻՄՆՎՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊՆԴՈՒՄԸ

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

2.1. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և **անաչառ դատարանի** կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

2.2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն.

*«Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինությունն առկա է, երբ նա **կանխակալ վերաբերմունք ունի որպես** կողմ հանդես եկող անձի, **նրա ներկայացուցչի**, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ»:*

2.3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն.

*«Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է զերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է դնում դատավորի կամ դատարանի անկախությունը և **անաչառությունը**»:*

2.4. Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն.

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

«Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է ***զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց»:***

2.5. Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն.

«Ի պաշտոնե գործելիս ***դատավորը պարտավոր է լինել անաչառ և զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց»:***

2.6. Սույն դիմումի 2.2 կետում վկայակոչված իրավակարգավորումը բովանդակային առումով նույնական է ՀՀ Դատական օրենսգրքի «դատավորի ինքնաբացարկը» վերտառությամբ 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին:

Նշվածից ակնհայտ է դառնում, որ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած իրավակարգավորումը կարգավորում է սահմանադրական դատարանում գործով դատավորի բացարկին վերաբերող հասարակական հարաբերությունները:

Նույն կերպ այդ դրույթն ընկալվում է նաև Սահմանադրական դատարանի անդամ պարոն Հրայր Թովմասյանի կողմից, ինչի մասին վկայում է վերջինիս հարցազրույցը, որտեղ նա զուգահեռներ է անցկացնում սահմանադրական դատարանում գործի քննության ժամանակ դատավորի վարույթին չմասնակցելու և

«սովորական դատարաններում»[3] դատավորների ինքնաբացարկի ինստիտուտի միջև, նշելով, որ Սահմանադրական դատարանում գործընթացն ավելի բարդ է:[4]

Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորումը բովանդակային առումով համընկնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի **(այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա)** 6-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման հետ՝ Ազգային ժողովը պնդում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի **(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)** և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **(այսուհետ՝ ՄԻԵԴ կամ Եվրոպական դատարան)** կողմից կայացված որոշումներում դատարանի անկողմնակալությանը և անաչառությանը, ինչպես նաև դատավորի կողմից բացարկ հայտնելու հարաբերություններին վերաբերող դիրքորոշումները պետք է հաշվի առնվեին Սահմանադրական դատարանի կողմից:

2.7. ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է դատավորի բացարկի ինստիտուտին 28.09.2010թ. ընդունված թիվ ՍԴՈ-918[5] որոշմամբ, որում նշվել է.

«Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել.

- ***<u>ինքնաբացարկի, որպես սահմանադրաիրավական սկզբունքներին համապատասխան արդարադատության անկախությունը և</u>***

[3] Ըստ երևույթի նկատի ունենալով ընդհանուր իրավասության դատարանները:
[4] https://youtu.be/IhbRkwT7gmU?t=31
[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=61234

անկողմնակալությունը, ինչպես նաև իրավունքի գերակայությունն ապահովող ինստիտուտի, օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,

- ***արդար և արդյունավետ դատաքննության իրավունքի, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական այլ իրավունքների երաշխավորված գործադրումը և պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից, /.../:***

Ինքնաբացարկը ՀՀ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է *արդարադատության բնագավառում* ***երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը*** *ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս և* ***կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը»:***

2.8. Դատավորի բացարկի ինստիտուտին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/1137/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում 13.03.2009թ. ընդունված որոշմամբ, նշելով.

«Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սահմանադրության 19-րդ[6] հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի

[6] Վճռաբեկ դատարանի կողմից որոշման կայացման պահին գործում էր 27.11.2005թ. փոփոխություններով Սահմանադրությունը, որի 19-րդ հոդվածին բովանդակային համապատասխանում է այժմ գործող Սահմանադրության 63-րդ հոդվածը:

կողմից իր գործի քննության իրավունքը արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է»:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Պյերսակն ընդդեմ Բելգիայի գործով կայացված որոշմանը[7]՝ Վճռաբեկ դատարանը նշել է.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ օրինական կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: *Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով:* ***Առաջինը սուբյեկտիվ մոտեցումն է,*** *որը փորձում է պարզել տվյալ դատավորի անձնական համոզմունքները քննվող գործի կապակցությամբ և* ***երկրորդը՝ օբյեկտիվ մոտեցումը****, որը սահմանում է, թե արդյոք դատավորի կողմից առաջարկվող երաշխիքները բավարար են այդ կապակցությամբ առաջացած ցանկացած օրինաչափ կասկած բացառելու համար»:*

Կրկնելով թիվ ԵԱՔԴ/1137/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԴ1/0019/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում 28.11.2014թ. ընդունված որոշմամբ հավելել է.

«Ինքնաբացարկի ինստիտուտը նպատակ ունի կողմերի և գործին մասնակցող այլ անձանց մոտ ամրապնդել համոզմունք առ այն, որ գործը քննվել և լուծվել է անկողմնակալ և օբյեկտիվ, ինչն իր հերթին նախադրյալներ է ստեղծում տվյալ գործով օրինական դատական ակտ կայացնելու համար»:

---

[7] PIERSACK v. BELGIUM (Application no. 8692/79, § 30), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57557

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

2.9. Դատավորի բացարկի ինստիտուտին՝ որպես արդար դատաքննության իրավունքի ապահովման բաղադրատարրի, առավել մանրամասն անդրադարձել է Եվրոպական դատարանն իր որոշումներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևողականորեն նշել է, որ.

«Պետության անկախ և անաչառ դատարանի կողմից վարույթի իրականացման ապահովման պարտավորությունը չի սահմանափակվում դատական համակարգով: Պետության նշված պարտավորությունը առնչվում է նաև գործադիր, օրենսդիր և ցանկացած այլ պետական իշխանությանը»:[8]

2.10. Անդրադառնալով դատարանի անաչառության որոշման չափանիշներին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է.

«Անաչառության հարցը ենթակա է որոշման՝ հիմք ընդունելով.

- *սուբյեկտիվ չափանիշը, որի դեպքում պետք է գնահատել կոնկրետ դատավորի վարքագիծը՝ պարզելու համար, թե արդյոք կոնկրետ դատավորը կոնկրետ գործով ունի որևէ կանխակալ վերաբերմունք,*

[8] AGROKOMPLEKS v. UKRAINE (Application no.23465/03, § 136), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-106636

- ***օբյեկտիվ չափանիշը, որի դեպքում գնահատման է ենթակա, թե արդյոք առկա են բավարար հիմքեր և երաշխիքներ բացառելու դատարանի անաչառության վերաբերյալ բոլոր օրինական կասկածները»:***[9]

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ.

«Այն դեպքում, երբ գործով դժվար է ձեռք բերել ապացույցներ, որոնց միջոցով կարելի է հերքել դատավորի անաչառ լինելը սուբյեկտիվ չափանիշով, ***օբյեկտիվ չափանիշը հանդես է գալիս, որպես լրացուցիչ երաշխիք»:***[10]

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անհրաժեշտ է համարել նշել նաև, որ.

«Դատարանի անաչառության հարցին առնչվող ***գործերի գերակշիռ մեծամասնությունում Եվրոպական դատարանը գնահատել է հենց անաչառության օբյեկտիվ չափանիշը»:***[11]

2.11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև.

«Անհրաժեշտ է արձանագրել՝ արդյոք դատավորի պահելածևից զատ՝ առկա են այլ փաստեր, որոնք կարող են կասկած առաջացնել իր

---

[9] MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 93), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031, NICHOLAS v. CYPRUS (Application no.63246/10, § 49), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179878

[10] MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 95 and § 101), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031

[11] RAMOS NUNES DE CARVALHO E SÁ v. PORTUGAL (Applications nos. 55391/13, 57728/13 and 74041/13, § 146), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-187507

անաչառության վերաբերյալ: Դա նշանակում է, որ ***պարզման է ենթակա՝ արդյոք առկա են որոշակի հանգամանքներ, որոնք կարող են կասկած հարուցել դատարանի կազմի անաչառության վերաբերյալ:*** *Սա ենթադրում է, որ այն դեպքում, երբ գնահատվում է՝ արդյոք առկա է լեգիտիմ պատճառ մտավախություն ունենալու, որ առանձին դատավոր կամ դատական կազմը անաչառ չէ,* ***գործով մասնակցող (շահագրգիռ) անձի կարծիքը կարևոր է, բայց որոշիչ չէ:*** ***Որոշիչ է այն, թե արդյոք այդ մտավախությունը կարելի է համարել օբյեկտիվորեն արդարացված»:***[12]

Եվրոպական դատարանն այս առնչությամբ ընդգծել է նաև, որ.

«Արտաքին ընկալումները կարող են ունենալ կարևորություն, այլ կերպ ասված՝ ***«արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլ դրա իրականացումը պետք է ակնառու լինի»*** *(appearances may be of a certain importance or, in other words, "justice must not only be done, it must also be seen to be done), քանի որ զոհասեղանին է դրված վստահությունը, որը դատարանները ժողովրդավարական հասարակություններում պետք է ներշնչեն հանրությանը:* ***Ուստի, ցանկացած դատավոր, որի անաչառ լինելու վերաբերյալ առկա են օրինական կասկածներ, պետք է ինքնաբացարկ հայտնի»:***[13]

---

[12] WETTSTEIN v. SWITZERLAND (Application no. 33958/96, § 44), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-59102, PABLA KY v. FINLAND (Application no. 47221/99, § 30), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61829, MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 96), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031

[13] MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 98), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

2.12. Եվրոպական դատարանն իր որոշումներում անդրադարձել է նաև այն հարցին, թե ինչպիսի հանգամանքներ կարող են օրինական (ողջամիտ) կասկած հարուցել դատավորի անաչառության վերաբերյալ, Եվրոպական դատարանը նշել է.

«Գոյություն ունի երկու հնարավոր իրավիճակ, որոնց դեպքում կարող է բարձրացվել դատավորի անաչառության հարց.

- *Առաջինը կրում է ֆունկցիոնալ բնույթ և վերաբերում է, օրինակ, մեկ վարույթի շրջանակներում նույն անձի կողմից տարբեր գործառույթների իրականացման դեպքերին կամ դատավորի և դատավարության այլ մասնակիցների միջև հիերարխիկ կամ այլ կապերի առկայության դեպքերին*

- ***Երկրորդը սուբյեկտիվ բնույթ կրող իրավիճակն է, որը բխում է կոնկրետ գործով կոնկրետ դատավորի վարքագծից կամ <u>դատավորի և գործին մասնակցող անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջև առկա կապերից</u>»:[14]***

Եվրոպական դատարանը նշել է նաև.

*«Մասնագիտական, ֆինանսական կամ **<u>անձնական կապերը դատավորի և</u>** գործով կողմի կամ **<u>կողմի փաստաբանի</u>** միջև նույնպես **<u>կարող են</u>***

[14] Guide on Article 6 of the European Convention on Human Rights, page 49, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_ENG.pdf

դատավորի անաչառության վերաբերյալ հարցեր առաջացնել»:[15] *Անգամ անուղղակի գործոնները կարող են հաշվի առնվել»:*[16]

«Յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշվի՝ արդյոք դիտարկվող հարաբերությունները այնպիսի բնույթի և աստիճանի են, որ արձանագրվի անաչառության բացակայություն դատարանի մոտ»:[17]

2.13. Ամփոփելով վերոգրյալը.

- Անաչառ դատարանի կողմից գործի քննության ապահովումը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարր,
- Ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ առկա է օբյեկտիվ կասկած, պետք է հեռացվի վարույթից,
- Դատավորի անաչառության վերաբերյալ կասկածները կարող են հիմք հանդիսանալ դատավորի բացարկման համար միայն այն դեպքում, երբ նշված կասկածները կարող են գնահատել որպես օբյեկտիվ,
- Դատավորի և դատավարության կողմի, վերջինիս ներկայացուցչի միջև անձնական բնույթի կապերի առկայությունը, ինչպես նաև գործով նախկինում

---

[15] PESCADOR VALERO v. SPAIN (Application no. 62435/00, § 27) http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61149, TOCONO AND PROFESORII PROMETEIȘTI v. MOLDOVA (Application no.32263/03, § 31) http://hudoc.echr.coe.int/eng?i=001-81193, MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 102), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031, WETTSTEIN v. SWITZERLAND (Application no. 33958/96, § 47), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-59102,

[16] PÉTUR THÓR SIGURÐSSON v. ICELAND (Application no.39731/98, § 45), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61020

[17] MORICE v. FRANCE (Application no.29369/10, § 77), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-154265

արտահայտած կարծիքը կարող է դատավորի անաչառության վերաբերյալ օբյեկտիվ կասկածի հիմք հանդիսանալ:

Ազգային ժողովը գտնում է, որ ներքոգրյալ փաստերը պետք է դիտարկվեն սույն դիմումի 2.13 կետում նշվածի լույսի ներքո:

2.14. Սահմանադրական դատարանի անդամ Հրայր Թովմասյանը դիմումատու Ռոբերտ Քոչարյանի փաստաբան Արամ Օրբելյանի կնքահայրն (քավորն) է:

Նշված հանգամանքը հրապարակայնորեն հաստատվել է թե՛ պարոն Հրայր Թովմասյանի և թե՛ պարոն Արամ Օրբելյանի կողմից:

Մասնավորապես, Հրայր Թովմասյանի կողմից «Թերթ.am» լրատվական կայքի լրագրող Բեթղեհեմ Արաբյանին 03.06.2019թ. տրված հարցազրույցում հնչել են հետևյալ հարցը և պատասխանը.

*«**Հարց:** Արդյո՞ք Արամ Օրբելյանը Ձեր սանի՞կն է, եթե այո, ապա այն փաստը, որ նա Ռոբերտ Քոչարյանի դատապաշտպանն է, չի՞ ազդի Ձեր դիրքորոշման վրա:*

***Պատասխան: – Այո՛, Արամ Օրբելյանն իմ սանիկն է, ես իր և՛ մկրտության, և՛ պսակադրության քավորն եմ** /.../»:*[18]

Պարոն Արամ Օրբելյանը «Ազատություն Ռադիոկայանի» կողմից թողարկվող «Ֆեյսբուքյան ասուլիս» վերնագրով հաղորդաշարի եթերում 24.06.2019թ. ասել է.

*«/.../ **պարոն Թովմասյանն իմ կնքահայրն է, դրա մասին բոլորը գիտեն** /.../»:*[19]

---

[18] https://www.tert.am/am/news/2019/06/03/Hrayr-tovmasyan/3015259, հարց 10-րդ

[19] https://youtu.be/uvnLV5WX|dw?t=1895

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

2.15. Ազգային ժողովն անհրաժեշտ է համարում հատուկ նշել նաև, որ պարոն Հրայր Թովմասյանի և պարոն Արամ Օրբելյանի տրված հարցազրույցների ընթացքում հնչեցրած խոսքերից պարզ է դառնում, որ վերջիններիս միջև ոչ միայն ֆորմալ առկա են կնքահոր (քավորի) և կնքասանի (սանիկի) հարաբերություններ, այլ նշված երկու անձինք իրականում ունեն մտերիմ հարաբերություններ և միմյանց համարում են հարազատ մարդիկ:

Մասնավորապես, նույն վերը վկայակոչված հարցազրույցում պարոն Հրայր Թովմասյանը, վերոնշյալ հարցին պատասխանելով, ասել է.

«Հարց: *Արդյո՞ք Արամ Օրբելյանը Ձեր սանի՞կն է, եթե այո, ապա այն փաստը, որ նա Ռոբերտ Քոչարյանի դատապաշտպանն է, չի՞ ազդի Ձեր դիրքորոշման վրա:*

Պատասխան: *– Այո՛, Արամ Օրբելյանն իմ սանիկն է, ես իր և՛ մկրտության, և՛ պսակադրության քավորն եմ:* ***Արամը, իր ընտանիքի մյուս անդամներն ինձ շատ <u>հարազատ</u> մարդիկ են, այդքանը:*** *Արամ Օրբելյանը այս գործում նշանակություն, ազդեցություն չի կարող ունենալ, այնպես, ինչպես որևէ մեկը չի կարող ունենալ, այդ թվում՝ հայրս ու մայրս, կինս, երեխաներս: Այն պահին, երբ անձնական կյանքս, ընկերներիս, հարազատներիս չկարողանամ փարանջատել դատավորի անաչառ լինելու պարտականությունից, մեկ րոպե անգամ չեմ աշխատի որպես դատավոր: Ի վերջո, իմ անաչառությունը առաջին հերթին իմ ընտանիքին, իմ հարազատներին է պետք: Հայաստանը փոքր երկիր է, իրավական հանրությունում շատերն են իրար ընկեր, բարեկամ, իսկ մենք էլ այլ երկրներից դատավորներ չենք կարող ներմուծել*

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

(ժպտում է – Հեղ.), ուստի յուրաքանչյուր դատավոր պետք է տարանջատի ընկերբարեկամն իր պարտականությունից՝ արդարադատություն իրականացնելիս:»:[20]

Վերը վկայակոչված նույն հարցազրույցում պարոն Արամ Օրբելյանը, անդրադառնալով իր և պարոն Հրայր Թովմասյանի միջև շփման հարցին, ասել է.

«/.../ բավականին երկար ժամանակ հնարավորինս մինիմալացրել եմ շփումը, չնայած շատ ցավալի է, որովհետև իմ շփումներն իմ <u>հարազատների</u> հետ աշխատանքային չեն, անձնական ոլորտում են /.../»:[21]

2.16. Ինչպես նշվեց սույն դիմումի 2.121.10 կետում. *«ամեն առանձին դեպքում պետք է որոշվի արդյոք դիտարկվող հարաբերությունները այնպիսի բնույթի և աստիճանի են, արձանագրվի անաչառության բացակայություն դատարանի մոտ»*[22], ուստի, Ազգային ժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչու է գտնում, որ պարոն Հրայր Թովմասյանի և պարոն Արամ Օրբելյանի միջև առկա հարաբերությունները կարող են հարուցել օրինական (ողջամիտ) կասկած պարոն Հրայր Թովմասյանի անաչառության վերաբերյալ:

2.17. Այսպես, թե՛ պարոն Հրայր Թովմասյանը և թե՛ պարոն Արամ Օրբելյանը իրենց հարաբերությունները բնորոշում են որպես հարազատական:

Ընդհանրապես դատարանի անաչառության հարց քննարկելիս կարծում ենք, որ առանձնահատուկ կարևոր է անդրադառնալ անհամատեղելիության հիմք ներկայացվող հարաբերությունների բնույթին, ինչը Հրայր Թովմասյանի և Արամ

---

[20] Տե՛ս 17-րդ հղումը

[21] https://www.youtube.com/watch?v=uvnLV5WXJdw&feature=youtu.be&t=1914

[22] Տե՛ս 16-րդ հղումը

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Օրբելյանի դեպքում վերը թվարկված փաստերի ու հայտարարությունների հիմքով ակնհայտորեն հարազատական է և լիովին համապատասխանում է «քավոր-սանիկի» հարաբերությունները ընտանեկան հարաբերությունների մակարդակի հավասարեցման հայկական ավանդական պատկերացումներին:

Ուստի, ավելորդ չէ նաև արձանագրել, թե ինչպիսի մտերիմ հարաբերություններ են ենթադրում հայկական իրականությունում կնքահոր (քավորի) և կնքասանի (սանիկի) հարաբերությունները:

Հայ հասարակության այն ընկալումը, որ հայկական իրականության մեջ «քավոր-սանիկ» բառակապակցությունը հաճախ օգտագործվում է իբրև հարազատական մտերիմ հարաբերությունների հոմանիշ, ցուցիչ, հիմնավորվում է նաև ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ:

Օրինակ, թիվ ԱՐԱԴ/0617/02/12 քաղաքացիական գործով պատասխանողը հայտնել է.

«Մինչ օրս ընտանիքը և ինքը հայցվորին տրամադրել ենք մոտ 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամից 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումար՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ իրենք հայցվորի ընտանիքի հետ գտնվում են ***քավոր-սանիկ բարեկամական կապերի մեջ****»*

Թիվ ԵԱՔԴ/1361/02/11 քաղաքացիական գործով վկա Արտակ Մարտիրոսյանը հայտնել է, որ *հանդիսանում է Սասուն Երանոսյանի ընկերը: Հետագայում իրենց ընկերական և ընտանեկան հարաբերությունները* ***ջերմացել և վերածվել են քավոր-սանիկ հարաբերությունների:*** *Սասունի հայրը՝ Սոկրատը, հանդիսացել է իր հարսանիքի քավորը, իսկ Սասունը՝ իր երեխաների կնունքի քավորը:*

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Թիվ ՎԴ/9919/05/16 վարչական գործով Արայիկ Մանվելյանը գործի քննության ժամանակ հարցաքննվել է որպես վկա և Դատարանին տված ցուցմունքով հայտնել է, որ *մանկուց ճանաչում է Արմեն Նավթալյանին,* ***մտերմիկ*** *հարաբերության մեջ են, նույն թաղամասի բնակիչներ են, իրար միջև* ***«քավոր-սանիկ»*** *կապ կա. հայրն Արմեն Նավթալյանի կնքահայրն է:*

Նմանատիպ դատական գործերի օրինակները բազմաթիվ են, ուստի սույն դիմումը ավելորդ չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ այդ դատական գործերի համարները կնշվեն հղումով:[23]

2.18. Պարոն Արամ Օրբելյանի և պարոն Հրայր Թովմասյանի միջև մտերիմ հարաբերությունների առկայությունը հավաստվում է նաև այն հանգամանքով, որ պարոն Հրայր Թովմասյանի՝ 17.12.2010թ.-ից մինչև 30.04.2014թ. որպես արդարադատության նախարար աշխատելու ընթացքում պարոն Արամ Օրբելյանը շուրջ երեք տարի զբաղեցրել է արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնը:

Ազգային ժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք կարելի է արձանագրել, որ առկա չէ պարոն Հրայր Թովմասյանի՝ Վարույթին մասնակցելու անհնարինության հիմք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրական դատարանին ուղղված դիմումը

---

[23] **Քաղաքացիական գործեր՝** ԵԴ/5569/02/19, ԵԿԴ/0017/02/18, ԵԱԴԴ/1032/02/12, ԵԷԴ/0491/02/12, ԵԿԴ/0821/02/12, ՍԴ3/0175/02/11, ԵԷԴ/0779/02/10, ԿԴ1/0105/02/10,
Քրեական գործեր՝ ԵԷԴ/0038/01/17, ԿԴ2/0042/01/16, ԵԿԴ/0174/01/16, ԵԿԴ/0200/01/13, ԵԱՔԴ/0072/01/12, ԵԱԴԴ/0137/01/11

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

ստորագրվել է ոչ թե փաստաբան Արամ Օրբելյանի, այլ փաստաբան Արամ Վարդևանյանի կողմից:

2.19. Ազգային ժողովը գտնում է, որ Ռոբերտ Քոչարյանի դիմումի՝ փաստաբան Արամ Վարդևանյանի կողմից ստորագրված լինելու հանգամանքը որևէ կերպ չի բացառում կամ նվազ հիմնավոր դարձնում այն դիրքորոշումը, որ առկա է պարոն Հրայր Թովմասյանի՝ Վարույթին մասնակցելու անհնարինության հիմք հետևյալ պատճառաբանությամբ.

i. Ռոբերտ Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի հատկանիշներով մեղադրանք առաջադրելու պահից ի վեր Ռոբերտ Քոչարյանի պաշտպանները՝ Ռուբեն Սահակյանը (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 13), **Արամ Օրբելյանը** (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 948), Հովհաննես Խուդոյանը (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 2040), հետագայում վերջիններիս միացած փաստաբան Հայկ Ալումյանը (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 284) և փաստաբան **Արամ Վարդևանյանը** (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1810) նույնականացնում են իրենց որպես ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի **փաստաբանական թիմ (այսուհետ՝ Փաստաբանական թիմ):**

Փաստաբանական թիմի կողմից բացվել է և վարվում է նաև **«Lawyers Media Center»** անվանումով ալիքը **Telegram** հավելվածում **(այսուհետ՝ Telegram ալիք)**,[24] որի միջոցով հանրությանը հասու են դառնում Փաստաբանական թիմի դիրքորոշումները երկրորդ նախագահի քրեական

[24] https://t.me/KocharyansLawyers

գործի, դրա ընթացքի վերաբերյալ, նշված ալիքում նաև տեղադրվում են Փաստաբանական թիմի անդամների հարցազրույցները, մամուլի ասուլիսների տեսանյութերը:

Նշված Telegram ալիքում տեղադրվել են թե՛ պարոն Արամ Օրբելյանի հարցազրույցները և թե՛ պարոն Արամ Վարդևանյանի հարցազրույցները:[25]

Թե՛ պարոն Արամ Օրբելյանը և թե՛ պարոն Արամ Վարդևանյանը և Փաստաբանական թիմի մյուս վերը հիշատակված անդամները նկարահանվել են հիշատակված քրեական գործին և Ռոբերտ Քոչարյանին վերաբերող «Փաստավավերագրական ֆիլմ. Արմենիանգեյթի հետքերով» անվանումով ֆիլմում:[26]

ii. 31.01.2019թ. լրագրողների հետ ճեպազրույցում պարոն Արամ Օրբելյանը, խոսելով այդ պահին ՀՀ Սահմանադրական դատարանում ընթացող գործընթացների մասին, նշել է.

*«/.../ **Վարդևանյան Արամի հետ քննարկման ժամանակ** ինքը ասաց մի քանի հարցերի չի անդրադարձել, որովհետև այս բողոքի մասով էլ է **հիմնականում** ինքը հեղինակը /.../»:*[27]

Վերոնշյալ խոսքերից պարզ է դառնում, որ չնայած, կարծես, փաստաբանական թիմում կատարվում է աշխատանքի որոշակի բաժանում, միևնույն է պարոն Արամ Օրբելյանը նույնպես որոշակի, առնվազն

---

[25] Տե՛ս օրինակ Telegram ալիքում 27.06.2019թ. տեղադրված հետևյալ հարցազրույցները՝ https://youtu.be/uvnLV5WXJdw, https://youtu.be/CIpp3Ci_Y90

[26] https://www.youtube.com/watch?v=jsoGOuWf6Kw

[27] https://www.youtube.com/watch?v=XU_r2QNP3R8&feature=youtu.be&t=379

քննարկումների ձևաչափով մասնակցություն է ունեցել Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների կազմման և հետագա ընթացքի աշխատանքներին:

2.20. Բացի այդ, 16.09.2019թ. news.am լրատվական կայքին տված հարցազրույցում Արամ Օրբելյանը խոսելով Սահմանադրական դատարանի կողմից Մարդու իրավունքների Եվրոպական դատարան և Վենետիկի Հանձնաժողով, ինչպես նաև Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների մասին, ասել է.

«Ինչ նյութեր են ուղարկվել որպես նյութեր, ոչ թե որպես հարցադրումներ Վենետիկի հանձնաժողով և ՄԻԵԴ անգլերեն լեզվով ես տեսել եմ, հայերեն լեզվով դրանց կարիքը չեմ ունեցել, որովհետև այդ մարմինների աշխատանքային լեզուներն անգլերենն ու ֆրանսերենն են: Իսկ թե ոնց են կազմվել, խնդրեմ, դա ՍԴ-ից կարելի է պնդել և ստանալ, ***բայց ակնհայտ է, որ դիմումները, որոնք կազմվել և ներկայացվել են ՍԴ և փաստաթղթերը եղել են հայերեն, այսինքն <u>մենք կազմել ենք</u> հայերեն, և, հարցադրումները, թե ինչ հարցեր տալ Վենետիկի հանձնաժողովին և ՄԻԵԴ-ին եղել են հայերեն,*** *հետևաբար, ինչպես ասացի այդ որոշումը հրապարակված է: Թե ինչի մասին է խոսքը, ինչ են* ուզում հայերեն ստանալ, խնդրեմ, երբ որ կլինի կարող են ՍԴ-ից պարզել:»:[28]

Մեջբերված հատվածից ուղղակիորեն բխում է, որ Օրբելյանը փաստաբանական թիմի շրջանակներում մասնակցել է Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների պատրաստմանը:

[28] https://news.am/arm/news/533721.html

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

2.21. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Նորմատիվ իրավական ակտի ***նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝*** *ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:*

Նշված իրավակարգավորման համաձայն, որևէ իրավական ակտի նորմը մեկնաբանելիս, որպես ուղենիշ պետք է ընդունվի նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի նպատակը:

Տվյալ դեպքում դիտարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավական կարգավորումը, որի համաձայն.

«Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինությունն առկա է, երբ նա ***կանխակալ վերաբերմունք ունի որպես*** *կողմ հանդես եկող անձի,* ***<u>նրա ներկայացուցչի</u>****, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ»:*

2.22. Նշված իրավական նորմի ամրագրումը կոչված է ապահովել, հանրության մոտ ձևավորելու համոզմունք, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունը իրականացվում է անկողմնակալ և անաչառ դատարանի կողմից:

Դատավորի բացարկի հիմքերի սահմանումը՝ որպես անկողմնակալ դատարանի երաշխիքի ապահովման կարևոր գործոն, ընդգծվել է նաև Եվրոպական դատարանի կողմից:[29]

Այսինքն վերոնշյալ իրավական նորմն ընդունված է ի կատարումն ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի:

2.23. Հաշվի առնելով, որ քննարկվող դրույթները ուղղված են պետության կողմից ստանձնած անաչառ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության ապահովման պարտավորության կատարմանը և ցանկացած իրավիճակի բացառմանը, երբ կողմի կամ անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ողջամիտ կասկած առաջանալ դատարանի անաչառության վերաբերյալ, ուստի նման պայմաններում Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում օգտագործվող «որպես կողմ հանդես եկող անձի ներկայացուցիչ» եզրույթը պետք է մեկնաբանվի առավել լայն և դրա տակ հասկացվի ցանկացած անձ, ով կողմի կամ անկողմնակալ դիտորդի կողմից ընկալվում է որպես կողմի ներկայացուցիչ և ոչ միայն այն անձը, ով ֆորմալ ստորագրել է Սահմանադրական դատարանին ուղղված դիմումը, նման կերպ մեկնաբանությունը կլինի խիստ ֆորմալիստական, բացասական իմաստով սահմանափակ և չի բխի քննարկվող իրավական նորմերն ընդունելիս դրանք ընդունած մարմնի նպատակից:

---

[29] MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 99-100), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Հարկ է նաև նկատել, որ Արամ Օրբելյանը հանդիսանում է Ռոբերտ Քոչարյանի ներկայացուցիչը (պաշտպանը) հենց այն քրեական գործով, որով ներպետական ատյանները սպառելով է Ռոբերտ Քոչարյանը դիմել ՀՀ Սահմանադրական դատարան:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված կարգավորումը վերը նկարագրված ձևով խիստ ֆորմալիստական կերպով մեկնաբանումը կնշանակի, որ ցանկացած ներկայացուցիչ, ով հասկանում է, որ իր և Սահմանադրական դատարանի դատավորներից մեկի կամ մի քանիսի միջև առկա անձնական կապը կարող է առաջացնել դատավորի վարույթին մասնակցելու անհնարինության հիմք, միշտ կարող է պարզապես ապահովել, որ իրականում իր կողմից (իր մասնակցությամբ) գրված դիմումը ստորագրվի իր վստահորդի կողմից, ինչի պայմաններում նաև հաշվի առնելով, որ, որպես կանոն, Սահմանադրական դատարանում գործերը քննվում են գրավոր ընթացակարգով (չեն հրավիրվում նիստեր, որոնց ներկայանալու անհրաժեշտություն կա), շատ հեշտ է դառնում պարզապես առերևույթ քողարկել դատավորի և ներկայացուցչի միջև առկա անձնական կապը և որպես հետևանք արհեստականորեն խուսափել դատավորի վարույթին մասնակցելու անհնարինության հարցի քննարկումից, երբ իրականում առկա է վերջինիս գործի քննությանը մասնակցելու անհնարինության հիմք:

2.24. Լրացուցիչ կասկած հարուցում է նաև այն հանգամանքը, որ այն պահից սկսած, երբ հստակ է եղել, որ առկա է բավականին մեծ հավանականություն, որ քրեական գործով առանցքային հարցերը կարող են դառնալ քննության առարկա ՀՀ Սահմանադրական դատարանում, պարոն Արամ Օրբելյանը և պարոն Հրայր

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Թովմասյանն առնվազն մեկ անգամ հանդիպել են միմյանց, ինչը հավաստվում է հենց պարոն Արամ Օրբելյանի խոսքերով:

Սույն դիմումի 2.144-րդ կետում հիշատակված **24.06.2019թ.**-ին տրված հարցազրույցի ընթացքում պարոն Արամ Օրբելյանն ասել է, որ բավականին երկար ժամանակ չի այցելել ՀՀ Սահմանադրական դատարան: Այն հարցին ի պատասխան, թե երբ է վերջին անգամ այցելել Հրայր Թովմասյանին ՀՀ Սահմանադրական դատարանում՝ պարոն Օրբելյանն ասել է.

«/.../ կարող է երկու-երեք ամիս լինի, կարող է սխալ ասեմ, կարող է ավել լինի /.../».[30]

Այսինքն, վերջին անգամ, ըստ պարոն Օրբելյանի, իր և պարոն Հրայր Թովմասյանի միջև շփում է տեղի ունեցել մոտավորապես 2019թ.-ի մարտ, ապրիլ ամիսներին, իսկ եթե հաշվի առնենք, որ ամեն դեպքում պարոն Օրբելյանը նշում է, որ կարող է սխալվել հստակ ժամկետը նշելու դեպքում, ապա ամեն դեպքում անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ հավանականությունը, որ նշված ժամկետից տարբերվող ժամկետը կարող է շեղվել մեկ ամսից ավել, շատ քիչ է, իսկ էլ ավելի քիչ է այն բանի հավանականությունը, որ հանդիպումը իրականում տեղի է ունեցել ոչ թե 2019, այլ 2018 թվականին:

Քրեական գործով շարունակաբար քննարկվող և գործի համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք հարցեր ՀՀ Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալու հավանականությունը տեսանելի և ընկալելի է եղել Փաստաբանական թիմի համար դեռևս առնվազն 2018թ.դեկտեմբեր ամսին:

Օրինակ, **03.12.2018թ.** ճեպազրույցում պարոն Արամ Օրբելյանը հարցին ի պատասխան նշում է.

---

[30] https://www.youtube.com/watch?v=uvnLV5WXjdw&feature=youtu.be&t=1857

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

***«Սահմանադրական դատարան դիմելու հարցը դեռևս օրակարգում է**, կան մի շարք տեխնիկական խնդիրներ, քանի որ /.../»:*[31]

Իսկ **26.12.2018թ.** պարոն Արամ Օրբելյանը Sputnik Армения լրատվական միջոցին տրված հարցազրույցում նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի հետադարձ ուժի հետ կապված խնդիրը դառնալու է ՀՀ Սահմանադրական դատարանի քննության առարկա *(«գնալու է Սահմանադրական դատարան»)*:[32]

Նաև **26.12.2018թ.** հրապարակված մեկ այլ հարցազրույցում նշել է.

*«/.../ Այս պահին քննարկում ենք տարբերակներ Սահմանադրական դատարան դիմելու համար, որովհետև Սահմանադրական դատարանը չորրորդ ատյան չի, որ ավտոմատ երրորդ ատյանից հետո դիմես չորրորդ ատյան, ինքը ունի հատուկ կարգավիճակ, հատուկ դիմելու պայմաններ և մասնավոր անձինք, այդ թվում նաև մենք այս դեպքում հնարավորություն ունենք դիմենք Սահմանադրական տեքստի լոգիկայով անձի նկատմամբ կիրառված օրենքի սահմանադրականությունը քննարկելու, **<u>տվյալ դեպքում կարող է լինել նաև օրենսդրական բացի կամ օրենքին տրված մեկնաբանության սահմանադրականության հարցը</u>**, բայց*

[31] https://www.youtube.com/watch?v=M5xEIe45dIc&feature=youtu.be&t=339

[32] https://youtu.be/SS5IW2R6pBc?t=1235

Սույն փաստաթուղթը առավել չծանրաբեռնելու նպատակով տեղադրում ենք այն տեսանյութերի հղումները, որոնցում պարոն Արամ Օրբելյանի խոսքերից պարզ է դառնում, որ Փաստաբանական խմբի և մասնավորապես պարոն Օրբելյանի համար պարզ է եղել Սահմանադրական դատարանի կողմից քննության հավանականությունը՝
https://www.youtube.com/watch?v=RIfbOGfvGLk&feature=youtu.be&t=487,
https://www.youtube.com/watch?v=8Im34Vyd-fQ&feature=youtu.be&t=361,
https://www.youtube.com/watch?v=AeIYVI1DgSo&feature=youtu.be&t=72,
https://www.youtube.com/watch?v=AeIYVI1DgSo&feature=youtu.be&t=845,
https://www.youtube.com/watch?v=AeIYVI1DgSo&feature=youtu.be&t=1201

չունենք հնարավորություն օրինակ դատարանի վճռի սահմանադրականության հարց քննարկել /.../».[33]

Ավելին, **15.11.2018թ.** ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման հրապարակման ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ տիկին Լիլիթ Թադևոսյանի կողմից հայտնվեց, որ.

> *«Միաժամանակ դատարանը տեղեկացնում է, որ սույն գործով հատուկ կարծիք է հայտնվել վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր պարոն Սերժիկ Ավետիսյանի կողմից: Վերջինս գտել է, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Դավթյանի, ինչպես նաև մեղադրյալ Քոչարյանի պաշտպաններ Ալումյանի, Սահակյանի, Օրբելյանի ու Խուդոյանի բողոքների վերաբերյալ վարույթը անհրաժեշտ է կասեցնել և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցով դիմել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

> *«Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ:*

[33] https://youtu.be/AelYVI1DgSo?t=180

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատախազը համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմում է համապատասխան մարմիններին»:

Այսինքն, **15.11.2018թ.** ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի կողմից հայտնվել է կարծիք, որից ուղղակիորեն բխում է քրեական գործով առանցքային հարցերից մեկով ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու հավանականությունը, սակայն, ինչպես նշվեց վերևում, 2019թ., հավանաբար մարտ - ապրիլ ամիսներին, պարոն Արամ Օրբելյանը և պարոն Հրայր Թովմասյանը հանդիպել են միմյանց ՀՀ Սահմանադրական դատարանում (դատարանի շենքում), ինչից ստացում է, որ պարոն Արամ Օրբելյանի այն հայտարարությունը, որ այն պահից սկսած, երբ քննարկվող գործը կարող էր առնչություն ունենալ Սահմանադրական դատարանի հետ, այդ ժամանակվանից պարոն Օրբելյանը չի այցելել պարոն Հրայր Թովմասյանին[34], իրականությանը չի համապատասխանում, ինչը լրացուցիչ օբյեկտիվ կասկածի հիմք է հարուցում դատարանի անաչառության վերաբերյալ:

2.25. Վերոգրյալից զատ, 2019թ. մարտ - ապրիլ ամիսներին Արամ Օրբելյանի և Հրայր Թովմասյանի ՀՀ Սահմանադրական դատարանի շենքում հանդիպելու փաստը լրացուցիչ հիմք է տալիս կասկածելու պարոն Հրայր Թովմասյանի անաչառությանը, հաշվի առնելով, որ դեռևս **12.02.2019թ.** ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴԱՈ – 13 որոշմամբ Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝

[34] https://youtu.be/uvnLV5WXJdw?t=1835

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել է քննության:

Հատկանշական է, որ նշված դիմումը ներկայացվել է թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի շրջանակներում Ռոբերտ Քոչարյանին առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով մեղադրանքով դատական գործի շրջանակներում, որի շրջանակներում էլ հենց Արամ Օրբելյանը որպես Ռոբերտ Քոչարյանի պաշտպան ներկայացնում է վերջինիս շահերը:

Այսպիսով, առնվազն թիվ ՍԴԱՈ-13 աշխատակարգային որոշմամբ վարույթ ընդունված գործի քննության շրջանակներում խախտել է դատավորի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածների բացառման ապահովմանն ուղղված դատավարության կողմի ներկայացուցչի, առանց հակառակ կողմի կամ վերջինիս ներկայացուցչի ներկայության, ընդդիմազերծ (ex parte) շփումների իրականացման արգելքը:

Դատարանի և դատավարության կողմի կամ վերջինիս ներկայացուցչի միջև ընդդիմազերծ շփումների արգելքը ենթադրում է, որ դատավորը չպետք է նախաձեռնի կամ թույլ տա դատավարության կողմերից մեկի կամ վերջինիս ներկայացուցչի միջև որևէ շփում, դատավարության մյուս կողմի կամ վերջինիս ներկայացուցչի բացակայությամբ, իսկ եթե նման շփում տեղի է ունենում դատավորի կամքից անկախ, ապա դատավորը պարտավոր է դրա բովանդակությունը հայտնել մյուս կողմից կամ վերջինիս ներկայացուցչին առաջին իսկ հնարավորության դեպքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրական դատարանի շենքը ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից պահպանության

ենթակա պետական մարմնի շենք է[35], ուստի բացակայում է շենք անարգել մուտք գործելու հնարավորությունը, ինչն իր հերթին նշանակում է, որ քննարկվող շփումը Արամ Օրբելյանի և Հրայր Թովմասյանի միջև չէր կարող տեղի ունենալ անկախ Հրայր Թովմասյանի կամքից, ուստի վերջինիս կողմից խախտվել է դատավարության կողմի ներկայացուցչի հետ շփում չնախաձեռնելու և (կամ) թույլ չտալու արգելքը:

2.26. Ազգային ժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հնարավոր փաստարկին, որ պայմանավորված Հայաստանի Հանրապետության տարածքի փոքրածավալությամբ և բնակչության սակավաթվությամբ՝ այն իրավիճակը, երբ դատավորը և որպես կողմ հանդես եկող անձի ներկայացուցիչը ճանաչում են միմյանց և գտնվում են հարազատական հարաբերությունների մեջ բավականին նորմալ է և տվյալ հանգամանքը որպես դատավորի վարույթին մասնակցելու անհնարինության հիմք դիտարկելը կարող է կաթվածահար անել Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը, ուստի դատավորի վարույթին մասնակցելու անհնարինության հիմքերը չի կարելի այդքան նեղ մեկնաբանել:

Նշված փաստարկին անդրադառնալու անհրաժեշտությունը Ազգային ժողովը պայմանավորում է նրանով, որ պարոն Հրայր Թովմասյանը սույն դիմումի 2.144 կետում հիշատակված հարցազրույցի ընթացքում անուղղակի կերպով հնչեցրել է այն.

[35] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=111131&fbclid=IwAR2BIwk_1WjE94e9dE5mWYrN3v94QFd_zpP8JTZqlccE_vm5JWiuNM8cPzY

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

*«**Հարց:** Արդյո՞ք Արամ Օրբելյանը Ձեր սանի՞կն է, եթե այո, ապա այն փաստը, որ նա Ռոբերտ Քոչարյանի դատապաշտպանն է, չի՞ ազդի Ձեր դիրքորոշման վրա:*

***Պատասխան:** – Այո՛, Արամ Օրբելյանն իմ սանիկն է, ես իր և՛ մկրտության, և՛ պսակադրության քավորն եմ: Արամը, իր ընտանիքի մյուս անդամներն ինձ շատ հարազատ մարդիկ են, այդքանը: /.../ **Հայաստանը փոքր երկիր է, իրավական հանրությունում շատերն են իրար ընկեր, բարեկամ, իսկ մենք էլ այլ երկրներից դատավորներ չենք կարող ներմուծել /.../»:**[36]*

2.27. Պարոն Հրայր Թովմասյանի կողմից բարձրացված հարցը դարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննության առարկա մի քանի գործերի շրջանակներում:

Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է.

«Չի կարելի հաշվի չառնել, որ Կիպրոսը փոքր երկիր է փոքր իրավաբանական ընկերություններով և դատավորների փոքր քանակով՝ ի համեմատ մեծ երկրների, հետևաբար նմանատիպ իրավիճակներ կարող են պատահել ավելի հաճախ: Դատարանն իր նախադեպային որոշումներում նշել է, որ դատավորի անաչառության վերաբերյալ բողոքները չպետք է դառնան դատական համակարգի կաթվածահարման պատճառ, և փոքր երկրներում բացարկի չափազանց խիստ հիմքերը կարող են խոչընդոտել արդարադատության իրականացմանը»:[37]

---

[36] https://www.tert.am/am/news/2019/06/03/Hrayr-tovmasyan/3015259 , հարց 10-րդ

[37] A.K. v. LIECHTENSTEIN (Application no. 38191/12, § 82), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-155824, NICHOLAS v. CYPRUS (Application no.63246/10, § 63), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179878, MICALLEF v. MALTA (Application no. 17056/06, § 102), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95031

2.28. Չնայած վերոնշյալ արձանագրություններին՝ MICALLEF v. MALTA գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրվեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքների խախտում:

Գործով դիմումատուի քույրը առնչվել էր երեք դատավորից բաղկացած դատական կազմի հետ, որի դատավորներից մեկը հանդիսանում էր հակառակ կողմի շահերը ներկայացնող փաստաբանի հորեղբայրը, ինչպես նաև դատավարության շրջանակներում հակառակ կողմի շահերն առաջին ատյանի դատարանում ներկայացրած փաստաբանի եղբայրը:

Նշված դեպքում Եվրոպական դատարանը գտավ, որ դատավորի հետ սերտ ընտանեկան կապերի առկայությունն ինքնին բավարար էր, որ առաջանան օբյեկտիվ կասկածներ տվյալ դատավորի անաչառության վերաբերյալ:[38]

2.29. NICHOLAS v. CYPRUS գործով Դատարանի կողմից նույնպես արձանագրվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքների խախտում:

Գործով դիմումատուն կասկածի տակ էր առնում Բարձրագույն դատարանում երեք դատավորից բաղկացած դատական կազմի անաչառության հանգամանքը, հաշվի առնելով, որ նախ դատավորներից մեկի որդին և հակառակ կողմի շահերը ներկայացնող փաստաբանի դուստրը ամուսնացած էին, և վերջիններս աշխատում էին մի փաստաբանական գրասենյակում, որտեղ հակառակ կողմի շահերը ներկայացնող փաստաբանը կառավարող գործընկեր էր:[39]

Եվրոպական դատարանն արդյունքում եզրահանգեց, որ նշված դատավորի և հակառակորդ կողմի շահերը ներկայացնող փաստաբանի միջև առկա

---

[38] Տե՛ս թիվ 32 հղումը MICALLEF v. MALTA գործի մասով

[39] NICHOLAS v. CYPRUS (Application no.63246/10, § 57), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179878

ընտանեկան կապը, որը պայմանավորված էր վերջիններիս զավակների ամուսնության մեջ գտնվելու փաստով, ինքնին բավարար էր, որպեսզի առաջանային օբյեկտիվ կասկածներ տվյալ դատավորի անաչառության վերաբերյալ:[40]

2.30. Այսպես, նշված երկու գործերով դատարանի կողմից անդրադարձ է կատարվել պատասխանող երկրի տարածքների փոքրաձավալ լինելու հարցին և դրանից բխող հետևանքներին, որոնց մասին նշվեց վերը, այնուամենայնիվ, դատարանի կողմից արձանագրվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

2.31. Ազգային ժողովը հարկ է համարում նշել, որ թե՛ Մալթան, և թե՛ Կիպրոսը էականորեն զիջում են Հայաստանի Հանրապետությանը տարածքով, բնակչության քանակով և բնակչության խտությամբ,[41] ուստի, Հայաստանի Հանրապետության փոքրաձավալ երկիր լինելը չի կարող հիմք հանդիսանալ դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինությունը չարձանագրելու համար համապատասխան հիմքերի առկայության դեպքում, երբ էականորեն ավելի փոքրաձավալ երկրներում դա չի հանդիսացել խոչընդոտ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար:

---

[40] NICHOLAS v. CYPRUS (Application no.63246/10, § 60), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179878

[41] Հայաստանի Հանրապետություն – բնակչության թվաքանակ՝ 2.924.816, խտություն՝ 101.5/կմ²
Կիպրոսի Հանրապետություն – բնակչության թվաքանակ՝ 1.141.166, խտություն՝ 123.4/կմ²
Մալթայի Հանրապետություն - բնակչության թվաքանակ՝ 413.965, խտություն՝ 1310 /կմ²
https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6
https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%AB%D5%BA%D6%80%D5%B8%D5%BD
https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%AC%D5%A9%D5%A1

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Վերը նշվածը սույն դիմումի 2.1-ից 2.12 կետերում նշված իրավակարգավորումների և ՀՀ Սահմանադրական, ՀՀ Վճռաբեկ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրենց որոշումներում արտահայտած դիրքորոշումների հետ համադրելով՝ Ազգային ժողովը պնդում է, որ անկողմնակալ դիտորդի մոտ կարող էր առաջանալ և հավանաբար նույնիսկ առաջացել է օբյեկտիվ կասկած պարոն Հրայր Թովմասյանի անաչառության վերաբերյալ թիվ ՍԴԱՈ-59 որոշմամբ քննության ընդունված գործով:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

3. Ազգային ժողովը գտնում է, որ առկա էր նաև ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման հիման վրա վարույթ ընդունված գործի քննությանը Սահմանադրական դատարանի անդամ Հրայր Թովմասյանի մասնակցելու անհնարինություն վերջինիս և Հայաստանի հանրապետական կուսակցության փոխկապակցվածության, իսկ վերջինիս՝ Սերժ Սարգսյանի հետ փոխկապակցվածության, ինչպես նաև Հայաստանի հանրապետական կուսակցության և Ռոբերտ Քոչարյանի փոխկապակցվածության հիմքերով

- Պարոն Հրայր Թովմասյանի Հայաստանի հանրապետական կուսակցության թիմի անդամ լինելու հանգամանքը:

3.1. Պարոն Հրայր Թովմասյանը 2010 թվականից ի վեր մշտապես զբաղեցրել է բարձր պաշտոններ Հայաստանի Հանրապետությունում:

Պարոն Հրայր Թովմասյանը 2012 թվականից հանդիսացել է Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ՝ մինչև ՀՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի կողմից որպես ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ նշանակվելը:

Այսպես, պարոն Հրայր Թովմասյանը 2010 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը եղել է Արդարադատության նախարար:

2013-2015 թթ. եղել է Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ:

2014 թվականի մայիսի 26-ից մինչև 2017 թվականի մայիսի 18-ը եղել է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

2017թ. ապրիլի 2-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել Հայաստանի հանրապետական կուսակցության համապետական ընտրական ցուցակով:

2017 թվականի մայիսի 20-ից մինչև 2018 թվականի փետրվարի 16-ը եղել է Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

3.2. Այսպես, այսքան տևական ժամանակ պարոն Սերժ Սարգսյանի՝ որպես նախագահ պաշտոնավարելու ընթացքում պարոն Հրայր Թովմասյանի կողմից թե՛ գործադիր և թե՛ օրենսդիր իշխանության մարմիններում առանցքային պաշտոններ զբաղեցնելու հանգամանքը ողջամիտ կասկած չի թողնում առ այն, որ պարոն Հրայր Թովմասյանը Հայաստանի հանրապետական կուսակցությունում զբաղեցրել է առանցքային դեր և վայելել է կուսակցության և Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանի վստահությունը:

3.3. Ինչպես նշվեց վերը, պարոն Հրայր Թովմասյանը 2013-2015 թթ. հանդիսացել է Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ:

Ինչպես հայտնի է, նշված հանձնաժողովի կողմից է մշակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխության առաջարկները, որոնք ընդունվեցին 2015թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեով:

3.4. Ազգային ժողովը հարկ է համարում նշել, որ դեռևս 2013թ., երբ հայտնի դարձավ. որ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու առաջարկներ են մշակվելու և երբ անգամ չկար դրանց հայեցակարգը, հանրության ստվար զանգվածի կողմից նշված

փոփոխությունների առաջարկը դիտարկվեց որպես գործող նախագահ Սերժ Սարգսյանի իշխանությունը շարունակելու միջոց, քանի որ առաջիկա նախագահական ընտրություններին Սերժ Սարգսյանն այլևս չէր կարող առաջադրվել որպես ՀՀ Նախագահի թեկնածու և կրկին ստանձներ երկրի կառավարման ղեկը, ինչը պետք է հնարավոր դառնար Սահմանադրության մեջ կատարվող փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման մոդելի անցնելով՝ վարչապետ ընտրվելով:[42]

3.5. Հարկ է նշել, որ պարոն Հրայր Թովմասյանը, ոչ միայն ակտիվորեն մասնակցել է վերոնշյալ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մշակմանը, այլ հետևողականորեն պաշտպանել է այդ փոփոխությունների ընդունման անհրաժեշտությունը, ինչը դրսևորվել է բազմաթիվ հարցազրույցներով, ինչպես նաև «Այո» և «Ոչ» նախընտրական արշավին մասնակցությամբ, որի ժամանակ վերջինս հորդորում էր կողմ քվեարկել քննարկվող փոփոխությունների ընդունմանը:[43]

3.6. Եվ ի հեճուկս բազմաթիվ հավաստումների և պնդումների, որ 2015թ. Սահմանադրության փոփոխությունները չեն հետապնդում պարոն Սերժ Սարգսյանի քաղաքական վերարտադրության նպատակ, և ի հեճուկս հենց վերջինիս 10.04.2014թ. Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների հետ հանդիպման ընթացքում արված հայտարարության, որում նշեց. *«Եվ ձեր առաջ, քննարկումների փուլն սկսելուց առաջ, պաշտոնապես հայտարարում եմ, որ ես, Սերժ Սարգսյանս, այլևս երբեք չեմ առաջադրվելու Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնի համար: Եթե վերջնական քննարկումների արդյունքում իմ ցանկությանը*

---

[42] https://youtu.be/1LcJYv6q8Kc?t=117

[43] https://www.youtube.com/watch?v=9cvb45WCJ24, https://www.youtube.com/watch?v=c63oNeazbHI, https://www.youtube.com/watch?v=fpnzI4-WoFE, https://www.youtube.com/watch?v=y5oiHFfMx_s

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

չհամապատասխանող ուղի ընտրվի, նկատի ունեմ պառլամենտական կառավարման մոդելը, ապա ես չեմ հավակնի նաև վարչապետի պաշտոնին: Վստահ եմ անգամ, որ մեկ մարդը երկու անգամից ավել իր կյանքում չպետք է հավակնի ընդհանրապես երկրի կառավարման ղեկին Հայաստանում», պարոն Սերժ Սարգսյանն, այնուամենայնիվ, առաջադրվեց և 17.04.2018թ.-ին ՀՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի կողմից ընտրվեց ՀՀ վարչապետի պաշտոնում, սակայն 23.04.2018թ. հրաժարական տվեց:

3.7. Հատկանշական է, որ անգամ այն բանից հետո, երբ դեռևս 2013թ. առաջացած մտավախությունները, որ պարոն Սերժ Սարգսյանը Սահմանադրական փոփոխությունների միջոցով ցանկանում է հնարավորություն ստանալ շարունակել երկրի կառավարման ղեկը սեփական ձեռքում պահել, ի կատար ածվեցին, պարոն Հրայր Թովմասյանը շարունակում է պնդել, որ 2013թ. նախաձեռնված սահմանադրական փոփոխությունները նման նպատակ չէին հետապնդում:[44]

3.8. Վերոշարադրյալը հաշվի առնելով, հանրության զգալի մասի մոտ առկա է ողջամիտ համոզմունք, որ պարոն Հրայր Թովմասյանի և պարոն Սերժ Սարգսյանի միջև առկա հարաբերությունների բնույթը մեծապես կարող է ազդել և պայմանավորել պարոն Հրայր Թովմասյանի վարքագիծը և որոշումների կայացումը իբրև Սահմանադրական դատարանի անդամ:

- <u>Հրայր Թովմասյանին ՀՀ 6-րդ գումարման ԱԺ-ում մեծամասնություն կազմող Հայաստանի հանրապետական կուսակցության աջակցությամբ</u>

[44] https://youtu.be/OcVfnPr7Zqk?t=271

սկզբից Սահմանադրական դատարանի անդամ, ապա Սահմանադրական դատարանի նախագահ նշանակելու վերաբերյալ:

3.9. Հրայր Թովմասյանի և Հայաստանի հանրապետական կուսակցության միջև առկա կապը և դրա մինչ այժմ շարունակական լինելու ողջամիտ կասկածների համար հիմք է նաև այն գործընթացը, որով Հրայր Թովմասյանը դարձավ Սահմանադրական դատարանի անդամ, ապա Սահմանադրական դատարանի նախագահ:

3.10. ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:»:

3.11. Այսպես, 2015թ. սահմանադրական փոփոխությունները ներառել են Սահմանադրական դատարանի կազմավորման սկզբունքորեն նոր և տարբերվող մոտեցում, որը կոչված է եղել բարձրացնելու դատավորների և՛ անկախության, և՛ նրանց ընտրության գործընթացով բարոյական և մասնագիտական, ինչպես նաև այլ որակների ստուգման արդյունավետությունը:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

3.12. Վերոնշյալ նպատակի համար ընտրվել էր Դատարանի կազմության գործընթացում ներգրավել Ազգային ժողովը, Հանրապետության նախագահին, Կառավարությունը և դատավորների ընդհանուր ժողովը մասնակից դարձնելու տարբերակը:

Այս դերակատարների ներգրավմամբ Սահմանադրությամբ նախատեսվել է 2 դատարանակազմական դերակատարների միաժամանակյա ներգրավումը յուրաքանչյուր դատավորի ընտրության հարցում՝ Դատարանի դատավորի թեկնածուի ներկայացնող (Հանրապետության նախագահ, Կառավարություն կամ Դատավորների ընդհանուր ժողով) և ընտրող մարմին (Ազգային ժողով):

3.13. Բացի այդ, 2015թ. ընդունված սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնավարման ժամկետը նույնպես փոփոխվեց, սահմանափակվեց 12 տարի ժամկետով՝ հակառակ նախկինում Դատարանի անդամի համար նախատեսված ժամկետի (65 կամ 70 տարի պաշտոնավարման ժամկետներով՝ կախված, թե որ խմբագրությամբ Սահմանադրության գործողության ժամանակ է նշանակվել այդ անդամը):

3.14. Սակայն, չնայած այն հանգամանքին, որ հենց պարոն Հրայր Թովմասյանը հանդիսացել է քննարկվող սահմանադրական փոփոխությունները մշակող հեղինակներից մեկը, վերջինիս առաջադրման և 6-րդ գումարման Ազգային ժողովում Հայաստանի հանրապետական կուսակցության աջակցությամբ սկզբից Սահմանադրական դատարանի անդամ, ապա Սահմանադրական դատարանի նախագահ ընտրվելու արդյունքում, վերոնշյալ նորմերի գործողությունը և հետևաբար նոր, ավելի անկախ և լեգիտիմ Սահմանադրական դատարան ունենալու հեռանկարները հետաձգվեցին մինչև 2035թ.՝ պարոն Հրայր Թովմասյանի 65 տարին լրանալը:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

3.15. Պարոն Հրայր Թովմասյանի՝ որպես Սահմանադրական դատարանի անդամ, ապա որպես Սահմանադրական դատարանի նախագահ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրությունն իրականացվել է մինչև 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի և ըստ այդմ ընտրության նոր կարգի, 12 ամյա առավելագույն ժամկետի և առավելագույնը 6 տարով ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ ընտրվելու կարգավորումների ուժի մեջ մտնելը, համապատասխանաբար շուրջ 40 և 20 օր առաջ:

3.16. Վերոնշյալը մի գուցե հնարավոր կլիներ պատահականություն համարել, եթե Սահմանադրական դատարանի այդ ժամանակ գործող նախագահ Գագիկ Հարությունյանը հեռանար ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնից անկախ սեփական կամ որևէ երրորդ անձի կամքից:

Սակայն Գագիկ Հարությունյանը հրաժարական տվեց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնից պաշտոնավարման ժամկետի ավարտից ընդամենը 22 օր առաջ և ոչ թե դադարեցրեց իր գործունեությունը, այլ շարունակեց այն Բարձրագույն դատական խորհրդում սկզբից որպես խորհրդի անդամ, ապա որպես նախագահ:

3.17. Նկարագրված իրադարձությունների պարզապես պատահական համընկնումը ողջամտորեն արժանահավատ չի կարող լինել, ինչը հաստատվում է նաև 13.03.2018թ. Հայաստանի հանրապետական կուսակցության գործադիր մարմնի անդամ, խոսնակ և ՀՀ ԱԺ փոխնախագահ պարոն Էդուարդ Շարմազանովի հարցազրույցից, որտեղ վերջինս հաստատում է, որ Գագիկ Հարությունյանի հրաժարականը, այնուհետև ԲԴԽ նախագահի պաշտոնում հայտնվելը և Հրայր

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Թովմասյանի Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում ընտրվելն ամենևին պատահական չէ:[45]

Միջանկյալ եզրահանգում.

3.18. Սույն դիմումի 3.1-ից 3.17 կետերում նշվածի համադրված վերլուծության արդյունքում Ազգային ժողովը գտնում է, որ նշված կետերում առկա տեղեկատվության իմացության և դրանց համադրման արդյունքում ցանկացած անկողմնակալ դիտորդ կարող է ողջամտորեն ենթադրել, որ Սահմանադրական դատարանի անդամ պարոն Հրայր Թովմասյանի կողմից որոշումներ կայացնելիս, վերջինս կարող է կաշկանդվել Հայաստանի հանրապետական կուսակցության և դրա նախագահ, ՀՀ երրորդ նախագահ պարոն Սերժ Սարգսյանի շահերով և ցուցումներով պայմանավորված:

- **Պարոն Հրայր Թովմասյանի Վարույթի շրջանակներում անաչառության վերաբերյալ օբյեկտիվ կասկածի հիմք է տալիս ՀՀ երկրորդ նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանի և ՀՀ երրորդ նախագահ պարոն Սերժ Սարգսյանի շահերի համընկնումը 2008թ. մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված քրեական գործի որոշակի կոնկրետ ելքով:**

3.19. Թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունվել մի դիմում, որը ներկայացվել է պարոն Ռոբերտ Քոչարյանի կողմից այնպիսի քրեական գործի հանգամանքների կապակցությամբ, որոնք վերաբերում են Հայաստանի

[45] https://youtu.be/xN8AwvdDIl0?t=76

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

հանրապետական կուսակցության նախագահի՝ Հանրապետության Նախագահ ընտրվելու առնչությամբ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ ընտրական և հետընտրական գործընթացներում սահմանադրական կարգի տապալման մեջ մեղադրանքին:

3.20. Ավելին, նշված քրեական գործով առաջադրված մեղադրանքում ուղղակիորեն շոշափվում է ՀՀ երրորդ նախագահի պարոն Սերժ Սարգսյանի անունը.

«Այն բանից հետո, երբ հավաքների թվացյալ ոչ իրավաչափ լինելու մասին ոստիկանության հայտարարություններով և կոչերով հնարավոր չի եղել խոչընդոտել շուրջօրյա խաղաղ հավաքների անցկացումը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ցանկալի իշխանական համակարգը պահելու համար՝ ***իշխանությունն իր մտերիմ Սերժ Սարգսյանին ցանկացած եղանակով հանձնելու****, ընթացող իրավական, քաղաքական գործընթացների վրա բազմամարդ հավաքների ազդեցության՝ իր համար անցանկալի հետևանքները ցանկացած եղանակով կանխելու, ընտրության արդյունքների վիճարկման իրավական գործընթացներն ապօրինի վերահսկելու նպատակով, ...*

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ***մտադրություն ունենալով ցանկացած եղանակով իշխանությունը փոխանցել Սերժ Սարգսյանին****, օգտվելով այն հանգամանքից, որ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է և համակարգում է պաշտպանության բնագավառում պետական մարմինների գործունեությունը, 2008 թվականի փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարության և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ խորհրդակցություն է անցկացրել և, ակնհայտ*

անցնելով իր լիազորությունները, բանավոր հրահանգել է զորքերը բերել մարտական պատրաստվածության՝ հաջորդ օրը՝ ժամը 00:00-ից հայտարարելով արտակարգ դրություն սահմանելու մասին:»:

3.21. Այսինքն, եթե Ռոբերտ Քոչարյանին առաջադրված մեղադրանքը հաստատվի, ապա այդ դեպքում, կառաջանան պարոն Սերժ Սարգսյանի որպես ՀՀ երկրորդ նախագահի լեգիտիմությունը կասկածի տակ առնելու բավարար հիմքեր, ինչը չի բխում պարոն Սերժ Սարգսյանի և ոչ էլ պարոն Հրայր Թովմասյանի շահերից, քանի որ պարոն Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը և ըստ այդմ՝ Հայաստանի հանրապետական կուսակցության լեգիտիմությունը կասկածի տակ դնելով ինքնաբերաբար կասկածի տակ է առնվում նաև հենց Հրայր Թովմասյանի լեգիտիմությունը իր կողմից զբաղեցված և վերը թվարկված բազմաթիվ պաշտոններում:

3.22. Բացի այդ, Սերժ Սարգսյանը Ռոբերտ Քոչարյանի 1998-2008թթ. որպես ՀՀ նախագահ պաշտոնավարելու ընթացքում նշանակվել է մի շարք բարձրաստիճան պաշտոնների:

Նշված ժամանակահատվածում Սերժ Սարգսյանը Ռոբերտ Քոչարյանի կողմից նշանակվել է.

1. ՀՀ Ներքին գործերի և ազգային անվտանգության նախարար (1998-1999թթ.),
2. ՀՀ Ազգային անվտանգության նախարար (1999թ.),
3. ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար (1999-2000թթ.),
4. ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար (1999-2007թթ.),

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

5. ՀՀ պաշտպանության նախարար (2000-2007թթ.)

6. ՀՀ Վարչապետ (2007-2008թթ.):[46]

3.23. Ռոբերտ Քոչարյանի կողմից Սերժ Սարգսյանին թվարկված բարձրաստիճան պաշտոններին նշանակելն ինքնին վկայում է նշված անձանց միջև շատ մեծ փոխվստահության և անձնական սերտ կապի մասին:

3.24. Ավելին, պարոն Սերժ Սարգսյանի կողմից պարոն Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի և դրա հետ փոխկապակցված գործերի ելքով շահագրգռված լինելու հանգամանքը հավաստվում է 31.08.2019թ. պարոն Սերժ Սարգսյանի կողմից պարոն Ռոբերտ Քոչարյանին ուղղված ծննդյան տարեդարձի կապակցությամբ շնորհավորական նամակի տեքստից.

«Մեծարգո՛ պարոն Քոչարյան,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան օրվա առթիվ: Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, փոկունություն և հաջողություններ ***հանուն արդարադատության Ձեր պայքարում: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը մինչ այժմ սատարել և այսուհետ ևս սատարելու է Ձեզ այդ պայքարում:***

Համոզված եմ, որ արդարադատությունը, ի վերջո, կհաղթի, և ժամանակը, որպես ամենամեծ դատավոր, ցույց կտա յուրաքանչյուրին իր իրական տեղը պատմության մեջ, մեր ժողովրդի և պետության կյանքում՝ զատելով սուտը ճշմարտությունից, ***բանսարկությունը*** *արդարադատությունից,* ***ամբոխահաճո*** *և* ***կեղծ հայրենասիրությունը*** *իրական հայրենասիրությունից:»:*

[46] https://www.gov.am/am/prime-ministers/info/99/, https://www.gov.am/am/prime-ministers/info/77/

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

3.25. Նշված շնորհավորական ուղերձում ակնարկները շատ ոչ երկիմաստ են:

Հատկանշական է նաև, որ մեջբերված շնորհավորական ուղերձը **նման բովանդակությամբ** ուղարկվել է թիվ ՍԴԱՈ-59 որոշմամբ հարուցված վարույթով նշանակված դատաքննությունից ընդամենը 4 օր առաջ:

- **Պարոն Հրայր Թովմասյանի Վարույթի շրջանակներում անաչառության վերաբերյալ օբյեկտիվ կասկածի հիմք է տալիս Հայաստանի հանրապետական կուսակցության և Ռոբերտ Քոչարյանի փոխկապակցվածության հիմքով:**

3.26. Այսպես, պարոն Ռոբերտ Քոչարյանին թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 300.1.-րդ հոդվածով մեղադրանք առաջադրվելուց հետո 6-րդ գումարման Ազգային ժողովի Հայաստանի հանրապետական կուսակցություն խմբակցության, Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ մի շարք պատգամավորներ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, Հայաստանի հանրապետական կուսակցություն խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանը, փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, փոխնախագահ Արփինե Հովհաննիսյանը, Գագիկ Մելիքյանը, Վահան Հարությունյանը, Միհրան Հակոբյանը, Կարինե Աճեմյանը, Ջեմմա Բաղդասարյանը, Արմեն Աշոտյանը, Անդրանիկ Հարությունյանը, Արամ Հարությունյանը, Հակոբ Ռաֆիկի Հակոբյանը, Կարեն Ավագյանը, Արաիկ Հովհաննիսյանը, Ռոբերտ Սարգսյանը, Շուշան Սարդարյանը, Հերմինե Նաղդալյանը, Մարգարիտ Եսայանը, Նաիրի Սահակյանը, Արայիկ Գրիգորյանը, Սամվել Նիկոյանը, Շուշան Պետրոսյանը, Միհրան Պողոսյանը, Ռուզաննա Մուրադյանը, Կարեն Կարապետյանը, Կորյուն Նահապետյանը, Գագիկ Մինասյանը, Ավետ Սարգսյանը ներկայացրել են անձնական երաշխավորություն

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինելու նպատակով:

ԱԺ ղեկավար կազմի և Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ այլ պատգամավորների կողմից. Վերոնշյալ փաստը վկայում է Հայաստանի հանրապետական կուսակցության Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքի մասով որոշակի դիրքորոշման մասին:

<u>Ամփոփելով.</u>

ՀՀ Ազգային ժողովը գտնում է, որ.

1. **Պարոն Հրայր Թովմասյանի տևական ժամանակ Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ լինելը, ինչպես նաև արդարադատության նախարարի, ԱԺ աշխատակազմի ղեկավարի, ապա որպես ԱԺ պատգամավոր պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ լինելու,**
2. **Պարոն Հրայր Թովմասյանի ներգրավվածությունը պարոն Սերժ Սարգսյանի իշխանության շարունակականության ապահովմանն ուղղված Սահմանադրական փոփոխությունների հեղինակման,**
3. **Պարոն Հրայր Թովմասյանի սկզբից ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ, ապա նույն դատարանի նախագահ նշանակվելու խնդրահարույց գործընթացի,**
4. **Պարոն Սերժ Սարգսյանի պարոն Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի որոշակի ելքով շահագրգռված լինելու հանգամանքները,**
5. **Պարոն Ռոբերտ Քոչարյանի և Հայաստանի հանրապետական կուսակցության փոխկապակցվածությունը,**

ինչպես նաև նշված փաստերը՝ սույն դիմումի 2.1-ից 2.12 կետերում նշված իրավակարգավորումների և ՀՀ Սահմանադրական, ՀՀ Վճռաբեկ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրենց որոշումներում արտահայտած դիրքորոշումների հետ համադրելով՝ Ազգային ժողովը պնդում է, որ անկողմնակալ դիտորդի մոտ կարող էր առաջանալ և հավանաբար նույնիսկ առաջացել է օբյեկտիվ կասկած պարոն Հրայր Թովմասյանի անաչառության վերաբերյալ թիվ ՍԴԱՈ-59 որոշմամբ քննության ընդունված գործով:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

4. <u>Ազգային ժողովը գտնում է, որ առկա է նաև ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման հիման վրա վարույթ ընդունված գործի քննությանը Սահմանադրական դատարանի անդամ Հրայր Թովմասյանի մասնակցելու անհնարինություն վերջինիս սեփական անձի վարույթին մասնակցելու անհնարինության հիմքերը քննության առնելու հարցը չբարձրացնելու հանգամանքով</u>

4.1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«Սահմանադրական դատարանի դատավորի՝ ***գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը Սահմանադրական դատարանը լուծում է գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման շրջանակներում****»:*

4.2. Ազգային ժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք սույն դիմումի 4.1. կետում նշված իրավական նորմը սահմանափակում է ՀՀ Սահմանադրական դատարանին անդրադառնալ դատավորի կոնկրետ վարույթին մասնակցելու անհնարինության հարցին այլ կերպ, քան գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման շրջանակներում:

4.3. Քննարկվող իրավանորմի խիստ տեքստուալ մեկնաբանությունից բխում է, որ դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցի վերաբերյալ

դատարանի դիրքորոշումը պետք է արտահայտվի **այն նույն որոշմամբ,** որով և լուծում է գործը քննության ընդունելու մասին հարցը:

Սակայն, ՀՀ Սահմանադրական դատարանն իր իսկ կողմից ձևավորած պրակտիկայով ցույց է տվել, որ դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը կարող է քննարկվել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման շրջանակներից դուրս՝ այլ որոշմամբ:

4.4. Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանի Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը որոշվել է ոչ թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշմամբ, որով նշված դիմումն ընդունվել է քննության, այլ մեկ այլ՝ թիվ ՍԴԱՈ-58 աշխատակարգային որոշմամբ:

Իսկ, թիվ ՍԴԱՈ-72 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված գործին դատավոր Վահե Գրիգորյանի մասնակցելու անհնարինության հարցը որոշվել է ոչ թե հենց թիվ ՍԴԱՈ-72 աշխատակարգային որոշմամբ, այլ մեկ այլ՝ թիվ ՍԴԱՈ-73 աշխատակարգային որոշմամբ:

4.5. Այսինքն, գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման շրջանակներից դուրս՝ այլ որոշմամբ դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցի լուծման հնարավորությունն արձանագրվել է հենց ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից:

4.6. Բացի այդ, Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի այնպիսի մեկնաբանությունը, որը հանգում է նրան, որ Սահմանադրական դատարանի դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը կարող է քննարկվել **բացառապես** գործը քննության ընդունելու աշխատակարգային որոշման շրջանակներում կամ գործը քննության ընդունելու հարցը քննարկելու փուլում՝ համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքի մասով:

4.7. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը նման սահմանափակ մեկնաբանությամբ չի կարող համահունչ դիտվել ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին առնվազն այն պատճառով, որ.

1. Առկա չէ հիմք վստահ լինելու, որ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներից առնվազն մեկը հենց գործը քննության ընդունելու փուլում մշտապես անպայմանորեն տեղյակ է լինելու դատավորի անաչառությունը կասկածի տակ առնելու համար հիմք հանդիսացող հանգամանքների մասին.
2. Պետք է հաշվի առնել, որ դատավորի անաչառությունը կասկածի տակ առնելու օբյեկտիվ հիմքերը զուտ ժամանակագրական առումով կարող են առաջանալ գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման կայացումից հետո, օրինակ՝ դատավարության մասնակիցներից մեկի ներկայացուցչի փոփոխման արդյունքում.
3. Չի կարելի վստահ լինել նաև, որ այն դատավորը, որի անաչառությունը կասկածի տակ առնելու օբյեկտիվ հիմքեր են առկա, ամեն դեպքում

կբարձրաձայնի այդ մասին գործը քննության ընդունելու հարցի քննարկման փուլում:

4.8. Ի վերջո, սահմանադրական արդարադատության իրականացումը մի դատական կազմի կողմից, որի դատավորներից մեկի կամ մի քանիսի անաչառության վերաբերյալ առկա են օբյեկտիվ կասկածներ, չի կարող արդարացվել զուտ ընթացակարգային դրույթների այս կամ այն կերպ ձևակերպված լինելով, քանի որ ոչ անաչառ դատարանը բովանդակային առումով առհասարակ դատարան դիտվել չի կարող, քանի որ եթե այդպիսի դատարանի կողմից կայացվելիք որոշման կատարման հասցեատեր սուբյեկտների մոտ առկա է կասկած դատարանի անաչառության վերաբերյալ, այդ կասկածը օբյեկտիվ է՝ չի փարատվել որևէ եղանակով, ապա չի կարելի ակնկալել այդպիսի դատարանի կողմից կայացված որոշման կատարում, քանի որ իմաստազրկվում է դատարանի կողմից արդարադատության իրականացման բուն գաղափարը:

4.9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է.

«Հաշվի առնելով արտաքին ընկալումների կարևորությունը՝ ***փաստերը (իրավիճակները), որոնք կարող են կասկած հարուցել դատավորի անաչառության վերաբերյալ պետք է բացահայտվեն վարույթի սկզբում:*** *Այդ դեպքում նշված փաստերը կարող են համակողմանի քննարկվել տարբեր չափանիշների լույսի ներքո, որպեսզի պարզվի, թե արդյոք առկա է դատավորի բացարկի անհրաժեշտություն»:*[47]

[47] NICHOLAS v. CYPRUS (Application no.63246/10, § 64-66), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179878

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

4.10. Այսինքն, Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշմամբ կարևորվում է ինքնաբացարկի հիմքերի քննարկումը և դրա վերաբերյալ դիրքորոշման արտահայտումը՝ որպես ողջամիտ կասկածների փարատման միջոց:

4.11. HARABIN v. SLOVAKIA գործով Եվրոպական դատարանը նշել է.

«Միայն այն բանից հետո, երբ դատարանը կանդրադառնա կողմերի փաստարկներին, որոնք վերաբերում են դատավորի բացարկմանը և կգնահատի, թե ինչքանով էր կողմի միջնորդությունը հիմնավոր, կարող է բարձրացվել դատավորի կազմում պահպանելու հարց, չնայած բացարկման հիմքի առկայությանը: Այս համատեքստում Եվրոպական դատարանը նշել է, որ դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները (107-108 կետեր), հողում են կատարում անհրաժեշտության դոկտրինին (doctrine of necessity), որը թույլ է տալիս այլ պայմաններում բացարկման ենթակա դատավորին քննել գործը, եթե դրա չիրականացումը կարող է հանգեցնել անարդարության: Սակայն այժմ չկա անհրաժեշտություն գնահատելու, թե ինչքանով դոկտրինի կիրառումը համահունչ կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսվող երաշխիքներին, քանի որ տվյալ գործով նման իրավիճակ չի ստեղծվել: /.../ Սահմանադրական դատարանի կողմից վկայակոչված պատճառները, մասնավորապես այն, որ դատավորների բացարկման դեպքում անհնարին կլինի գործի քննությունը, չի կարող արդարացնել այն դատավորների մասնակցությունը գործին, որոնց բացարկվել են անաչառության բացակայության հիմքով ավելի վաղ քննված գործերով:».[48]

---

[48] HARABIN v. SLOVAKIA (Application no. 58688/11, § 139, 140), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-114666

4.12. Այսինքն, Եվրոպական դատարանի կողմից այն աստիճանի է կարևորվել անաչառության վերաբերյալ կասկածներ պարունակող փաստարկներին դատարանի կողմից անդրադառնալու հարցը, որ.

ա) Եվրոպական դատարանը նշել է, որ անգամ որոշման կայացման համար անհրաժեշտ քվորումի դատավորի բացարկման հիմքով վտանգված լինելը չի կարող հիմք հանդիսանալ դատավորի անաչառության վերաբերյալ կասկածներ պարունակող փաստարկներին չանդրադառնալու համար,

բ) Եվրոպական դատարանը քննարկվող որոշման շրջանակներում զերծ է մնացել գնահատական տալու, թե արդյոք անհրաժեշտության դոկտրինին (doctrine of necessity) հղում կատարելով դատավորի կազմում պահպանելը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

4.13. ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԴ1/0019/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում 28.11.2014թ. կայացված որոշմամբ նշել է.

«դատավորի անաչառության վերաբերյալ կասկածները փարատվում են կամ ***դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելով, կամ <u>ինքնաբացարկի միջնորդությունը պատճառաբանված որոշմամբ մերժելով»:</u>***

4.14. Այսինքն, դատավորի անաչառության վերաբերյալ կասկածների փարատման հարցում այդ հարցին անդրադառնալը և բացարկի (վարույթից հեռացվելու) անհրաժեշտության բացակայության մասին որոշման կարևորությունն արձանագրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

4.15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրվել է.

«ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումը չի կարող հիմնավորվել այն փաստարկով, որ որոշումն ընդունվել է ոչ անկախ կամ ոչ անաչառ դատարանի կողմից կամ ընթացակարգային երաշխիքների կոպիտ խախտմամբ, ***եթե որոշումը վերանայվել է այլ դատական մարմնի կողմից, որն ունեցել է ամբողջական իրավասություն և այդ դատական մարմնի կողմից շտկվել են ստորադաս ատյանի կողմից թույլ տրված սխալները անկախության, անաչառության և այլ երաշխիքների մասով»:***[49]

4.16. ՀՀ Սահմանադրական դատարանը 28.09.2010թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ինքնաբացարկի ինստիտուտին վերաբերող իրավական նորմերի շրջանակներում ընդունված թիվ ՍԴՈ-918 որոշմամբ ամրագրել է.

«Նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է դատավորի ինքնաբացարկին, որը նա պարտավոր է իրականացնել օբյեկտիվ հիմքերի առկայության դեպքում, ինքնաբացարկի միջնորդության մերժումը չի կարող բողոքարկման առարկա չդառնալ: Հակառակ դեպքում հիմնավոր կլինի դիմող կողմի պնդումն այն մասին, որ վերջին հաշվով դատավորի անկողմնակալության մասին հանգամանքներն օբյեկտիվ գնահատման առարկա չեն դառնում:

---

[49] DE HAAN v. THE NETHERLANDS (84/1996/673/895, § 52-55), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58085, CROMPTON v. THE UNITED KINGDOM (Application no.42509/05, § 79), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95364, DENISOV v. UKRAINE (Application no.76639/11, §§ 65, 67 and 72)

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

Միջազգային փորձի և տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ ***ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կարգի և ժամկետների որոշումն օրենսդրի հայեցողության հարցն է /.../»:***

4.17. Այսպես, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, և թե՛ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից դատավորի բացարկման հարցի բողոքարկելի լինելը դիտվել է որպես անձի անաչառ դատարանի կողմից իր գործը քննվելու իրավունքի ապահովման լրացուցիչ երաշխիք:

4.18. Ազգային ժողովը գտնում է, որ Սահմանադրական դատարանի կողմից հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանում գործի քննությանը մասնակից կողմը չունի դատավորի բացարկի հարցը մեկ այլ ատյանի կողմից ստուգման երաշխիք, և հենց այս հանգամանքը նաև հաշվի առնելով, Ազգային ժողովը գտնում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի գործին մասնակցելու անհնարինության հարցի քննարկումը չի կարող սահմանափակվել բացառապես գործը քննության ընդունելու քննարկման փուլով, և Սահմանադրական դատարանը պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր գործուն քայլերը, որպեսզի փարատվեն դատավորի անաչառության վերաբերյալ բարձրաձայնվող կասկածները:

4.19. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

«Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարց կարող է բարձրացնել Սահմանադրական դատարանի դատավորներից յուրաքանչյուրը:»:

4.20. Վերոնշյալ հոդվածից բխում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակ ունեցող անձը կարող է բարձրացնել դատավորի կոնկրետ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարց:

Այսինքն, նման հարց բարձրացնելու հնարավորության հիմքը անձի կարգավիճակն է, և հետևաբար կոնկրետ գործի դատաքննությանը մասնակցելը կամ գործի քննությունից հեռացված լինելու հարցը չի կարող ունենալ որևէ նշանակություն դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հիմքերի բարձրացման տեսանկյունից:

4.21. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում նշված Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության թվարկված հիմքերի բովանդակությունից պարզ է դառնում, որ դրանց առկայության դեպքում առկա կլինի օբյեկտիվ կասկած, որ այն դատավորը, որի մասով այդ հիմքերն առկա են կկարողանա գործով կայացնել որոշում, որը չի կարող կասկածի տակ դրվել:

Սակայն, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում նշված Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության թվարկված հիմքերի բովանդակությունից բնավ չի բխում, որ այն դատավորը, որի մասով այդ հիմքերն առկա են պետք է զրկվի մեկ այլ դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության մասին հարց բարձրացնելու հնարավորությունից:

4.22. Բացի այդ, եթե օրենսդիրը նպատակ ունենար սահմանափակել դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության մասին հարց բարձրացնելու հնարավորությամբ օժտված սուբյեկտներին բացառապես գործի քննությանը մասնակցած դատավորներով, ապա հենց այդպես էլ կնշեր Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում, քանի որ օրինակ նույն օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Սահմանադրական դատարանը գործով որոշում կամ եզրակացություն է ընդունում դատարանի դռնփակ խորհրդակցությունում, ***որին ներկա են լինում միայն Սահմանադրական դատարանի՝ տվյալ գործով դատաքննությանը մասնակցած դատավորները:»:***

Այսինքն, այն դեպքում, երբ օրենսդիրը ցանկացել է հատուկ նշել, որ որոշակի հնարավորություն, այս դեպքում՝ գործով որոշում կամ եզրակացություն ընդունելիս դռնփակ խորհրդակցությունում ներկա գտնվելու, ունեն Սահմանադրական դատարանի որոշ դատավորներ, դրա մասին ուղղակիորեն նշել է:

4.23. Ուստի, թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված գործից դատավոր Վահե Գրիգորյանի հեռացված լինելու հանգամանքը չի զրկել վերջինիս գործի քննությանը մասնակցող դատավորի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը բարձրացնել, քանի որ քննարկվող գործից հեռացված լինելով հանդերձ, վերջինս չի դադարել լինել ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր»:

4.24. **Վերը նշվածի համատեքստում Ազգային ժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ սույն դիմումի ներկայացման համար որոշիչ նշանակություն է ունեցել հենց այն հանգամանքը, որ պարոն Հրայր Թովմասյանը վարույթին մասնակցելու անհնարինության բազմաթիվ հիմքերի ակնհայտ առկայության**

պարագայում, շարունակաբար՝ գործը քննության ընդունելու փուլից սկսած, խուսափել է դրանց մասին բարձրաձայնել, դրանց անդրադառնալ և չի դարձրել դրանք քննարկման առարկա, չի անդրադարձել դրանց անգամ այն ժամանակ, երբ իր՝ վարույթին մասնակցելու անհնարինության հարցը բարձրացրել է դատավոր Վահե Գրիգորյանի կողմից:

4.25. Գործի քննությանը մասնակցելու հնարավոր անհնարինությանը հանգեցնող հիմքերին անդրադառնալուց խուսափելն էլ ավելի է խորացնում պարոն Հրայր Թովմասյանի անաչառության վերաբերյալ վերոհիշյալ փաստերով պայմանավորված առաջացած ողջամիտ կասկածը:

4.26. Այս համատեքստում հատկանշական է նաև այն, որ ՀՀ Սահմանադրական դատարանն Աշխատակարգային որոշմամբ նշել է, որ Գործի քննությունը պետք է իրականացվի գրավոր ընթացակարգով, մինչդեռ Վարույթի նկատմամբ կիրառելի Օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն.

«Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերը Սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, ***բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն,*** *կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը:»:*

4.27. Ազգային ժողովը գտնում է, որ ավելի քան ակնհայտ է, որ քննարկվող Գործը ձեռք էր բերել հանրային մեծ հնչեղություն, պայմանավորված այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարան դիմումը ներկայացվել է մի քրեական գործով ներպետական բոլոր ատյանները սպառելու արդյունքում, որով ՀՀ Երկրորդ

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

նախագահին առաջադրված է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածով և քրեական գործով շոշափվում են 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունները, որոնց այս կամ այն կերպ մասնակից է եղել հանրության զգալի մասը, և այս փաստը հաստատվում է նաև Սահմանադրական դատարանի դատավոր պարոն Ֆելիքս Թոխյանի կողմից հայտնած հատուկ կարծիքով, որում վերջինս նշում է.

*«Համոզված եմ, որ սույն գործով Բարձր դատարանը կգար այլ եզրահանգման, եթե չցուցաբերվեր որոշակի շտապողականություն՝ այս բարդ և **մեծ հանրային հնչեղություն ունեցող** խնդրի հետ կապված:»:*[50]

- **ՄԻԵԿ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԴԳԾՎԱԾ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԿԱՊԵՍ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

4.28. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է.

*«Ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության առաքելությունն է երաշխավորել օրենքի գերակայությունը: Այսպես, Եվրոպական դատարանը հատկապես կարևորում է այն հարցը, երբ պետությունը, ինչպես սույն գործում, հարուցում է կարգապահական վարույթ Գերագույն Դատարանի նախագահի նկատմամբ: **Քանի որ զոհասեղանին է դրված ազգային բարձրագույն դատական ատյանի նկատմամբ հանրության վստահության հարցը:** <u>Այդ</u>*

[50] http://www.concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1476.pdf, էջ 55

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

պատճառով հատուկ կարևոր է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները պահպանվեն»:

4.29. Ազգային ժողովը գտնում է, որ տվյալ դեպքում ունենք գրեթե նույնական իրավիճակ, քանի որ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով վերջինիս կարգավիճակը, դերակատարությունը և առաքելությունը Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ժողովրդի համար, սովորականից ավելի լուրջ պետք է մոտենա դատավորի՝ գործին մասնակցության անհնարինության հարցին, երբ առկա են ողջամիտ կասկածներ վերջինիս անաչառության վերաբերյալ:

4.30. Ամբողջացնելով և եզրափակելով վերոգրյալը.

1. Հրայր Թովմասյանի կողմից չի բարձրացվել սեփական անձի գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը Ռոբերտ Քոչարյանի դիմումը վարույթ ընդունելու հարցի քննարկման փուլում,
2. Հրայր Թովմասյանի կողմից չի բարձրացվել, ինչպես նաև վերջինիս և Սահմանադրական դատարանի կողմից անդրադարձ չի կատարվել Հրայր Թովմասյանի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցին նաև Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանի 28.08.2019թ. գրությունը ստանալուց հետո:

4.31. Հաշվի առնելով, որ քննարկվող հարցին անդրադարձ կատարելու փաստը կարող է հավաստվել բացառապես Սահմանադրական դատարանի կողմից ընդունված դատական ակտով, ուստի սույն դիմումի 4.30 կետում նշված

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

<u>փաստերը հավաստվում են ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման և ՍԴՈ-1476 որոշման տեքստերում Հրայր Թովմասյանի՝ Գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցին որևէ անդրադարձի բացակայությամբ:</u>

Սույն դիմումի 4.30 կետում նշված փաստերը համադրելով սույն դիմումի 2.1-ից 2.12 կետերում նշված իրավակարգավորումների և ՀՀ Սահմանադրական, ՀՀ Վճռաբեկ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրենց որոշումներում արտահայտած դիրքորոշումների հետ՝ Ազգային ժողովը պնդում է, որ անկողմնակալ դիտորդի մոտ կարող էր առաջանալ և հավանաբար նույնիսկ առաջացել է օբյեկտիվ կասկած պարոն Հրայր Թովմասյանի անաչառության վերաբերյալ թիվ ՍԴԱՈ-59 որոշմամբ քննության ընդունված գործով:

Այս համատեքստում Ազգային ժողովը կարևոր է համարում նաև նշել, որ տվյալ դեպքում Հանրապետության Բարձր դատարանի նկատմամբ վստահելիության հարցը առավել սուր է նաև այն պատճառով, որ քննարկվող Վարույթն առնչվում է 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձություններին, որոնց այս կամ այն ձևաչափով եղել է մասնակից հանրության մեծ մասը, ուստի Վարույթի նկատմամբ առկա է հասարակական առավել լայն ուշադրություն և նման պարագայում պետք է բացառել, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունը զուգորդվի դատարանի և (կամ) առանձին դատավորի անաչառության վերաբերյալ առկա օբյեկտիվ (ողջամիտ) կասկածներով:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

5. Ազգային ժողովը գտնում է, որ առկա էին նաև ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման հիման վրա վարույթ ընդունված գործի քննությանը Սահմանադրական դատարանի անդամ Հրայր Թովմասյանի մասնակցելու անհնարինություն վերջինիս կողմից նախկինում 2008թ. մարտի 1-ից 2-ի իրադարձությունների և դրանց հաջորդած դատավարությունների վերաբերյալ կարծիքներ արտահայտելու և պնդումներ կատարելու փաստերով պայմանավորված

- Պարոն Հրայր Թովմասյանը մինչև Գործի քննությունը բազմիցս կարծիք է արտահայտել 2008 թ. մարտի 1-ից 2-ը մայրաքաղաք Երևանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների, դրանց հաջորդած դատավարությունների վերաբերյալ, ինչը կարող է վկայել Գործի քննությանը վերջինիս մասնակցությունն անհնարին դարձնող կանխակալ վերաբերմունքի առկայության մասին:

5.1. Այսպես, 20.06.2009թ. «Ազատություն Ռադիոկայան» լրատվամիջոցի հետ զրույցում, խոսելով 2009թ. ընդունված համաներման[51] մասին, նշել է.

*«Այն մարդիկ, որոնք մեղադրվում էին մարտիմեկյան իրադարձությունների հետ կապված, եթե հիմա նույնիսկ ազատ արձակվեն, չեն ընդունելու դա որպես բարի կամքի դրսևորում և քայլ դեպի երկխոսության գնալը, **որովհետև իրենք***

[51] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=52145

իրենց մեղավոր չեն ճանաչում, ինչի համար շատ դեպքերում հիմքեր ունեն, որովհետև դատավարությունները ցույց տվեցին, որ խնդիրներ կան թե՛ նախաքննության առումով, թե՛ նրանց մեղսագրվող արարքների բովանդակության մեջ, թե՛ նրանց մասնակցության մեջ այդ ամբողջում»:[52]

5.2. 29.06.2009թ. «A1+» լրատվամիջոցի հետ զրույցում, կրկին խոսելով 2009թ. ընդունված համաներման մասին, նշել է.

«Անկախ նրանցից, թե ով ինչ է ասում, համաներման հիմքում մարտի 1-ի դեպքերն էին: Դուրս եկեք փողոց և ցանկացած շարքային քաղաքացի ձեզ կասի, որ համաներման անկյունաքարը Մարտի 1-ի դեպքերն էին: ***Մարտի 1-ի դատավարությունները ամոթ էին մեր երկրի համար: Մարտի 1-ի դեպքերի լավագույն հանգուցալուծումը համաներումը չէ: Ես գտնում եմ, որ մարտի 1-ի դեպքերի լավագույն լուծումը հարուցված գործերի կարճումն էր՝ այդ նույն ժամանակահատվածում: Պատմությունը պատասխան պետք է տա նաև մարտի 1-ի սպանությունների համար:»:***[53]

5.3. Վերոնշյալից զատ, 2010 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը պարոն Հրայր Թովմասյանի որպես ՀՀ Արդարադատության նախարար պաշտոնավարելու ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Ռոբերտ Քոչարյանի ներգրավմամբ քրեական գործի հանգամանքների վերաբերյալ արտահայտել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

---

[52] https://www.azatutyun.am/a/1758345.html

[53] https://a1plus.am/hy/article/32097?fbclid=IwAR0Esbq3nGccabh-PPItoglVtEkrrG378-W-2TOY_wt5yq4Ce-m4orClofY

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

5.4. ՀՀ Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1971-Ն որոշման 7-րդ կետի «ժ» ենթակետի համաձայն.

> *«Նախարարության նպատակները և խնդիրներն են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի գործունեության ու միջազգային կապերի իրավական ապահովումը, միջպետական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի իրավական պաշտպանության աշխատանքներին մասնակցությունը,* ***ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացնելը****, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը»:*[54]

5.5. Մասնավորապես, պարոն Հրայր Թովմասյանի՝ որպես արդարադատության նախարար պաշտոնավարելու ընթացքում, Եվրոպական դատարանը ՀՀ կառավարությանը կոմունիկացրել է մի շարք դիմումներ, որոնցով դիմումատուների նկատմամբ քրեական հետապնդումը՝ որպես խափանման միջոց կիրառված կալանքները, նրանց դատապարտումը հիմնվել են 2008 թ.-ի մարտի 1-2-ը տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ վերջինիս արարքների վրա:[55]

---

[54] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98980

[55] Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ վճիռը (դիմում թիվ 23089, 20/09/2018թ.-ի վճիռ), որով Հայաստանի կառավարության դիրքորոշումը ՄԻԵԴ ներկայացվել է պրն. Հ. Թովմասյանի պաշտոնավարման օրոք՝ 29.04.2011թ.-ին, ինչպես և այս գործով կողմերի բոլոր մյուս դիրքորոշումները (Հայաստանի կառավարության առարկությունները կցված են): Նույնը վերաբերում է օրինակ նաև Դավիթ Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի (դիմում թիվ 61730/08, դիմումի հաղորդակցությունը Հայաստանի կառավարութանը 12.02.2013թ-ին), Վարդգես Գասպարին ընդդեմ Հայաստանի (դիմում թիվ 44769/08, դիմումի հաղորդակցությունը Հայաստանի կառավարութանը

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

5.6. Վերոնշյալ և առհասարակ Հրայր Թովմասյանի՝ որպես արդարադատության նախարար պաշտոնավարման ժամանակ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ ներկայացված դիմումներով՝ ՀՀ կառավարության դիրքորոշումներում տեղ է գտել այն պնդումը, որ 2008թ. իրադարձությունների ընթացքում քաղաքացիները դիմել են զանգվածային անկարգությունների, իսկ նրանց կողմից իրականացվող հավաքներին միջամտություններն իրականացվել են օրենքի հիման վրա և համաչափության սկզբունքի խստիվ պահպանմամբ:[56]

5.7. Պարոն Հրայր Թովմասյանի՝ որպես արդարադատության նախարար պաշտոնավարման տարիներին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ՀՀ կառավարությանն է կոմունիկացվել նաև «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի դիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, որով Եվրոպական դատարանը գործը կոմունիկացվել էր նաև Կոնվենցիայի 15 հոդվածի շրջանակներում հարցադրումներով:

Մասնավորապես, Եվրոպական դատարանի հարցերը վերաբերում էին արտակարգ դրության մասին հրամանագրի դրույթներին այն մասով, թե արդյոք եղել է «պատերազմ կամ ազգի կյանքին սպառնացող այլ վտանգ» արտակարգ դրություն հայտարարելու համար, ինչպես նաև, թե արդյոք արտահայտվելու

22.11.2011թ-ին: Տես նաև ոստիկանության կողմից քաղաքացիների հավաքների ազատությանը նույն համատեքստում Գյումրի քաղաքում միջամտությունների և սահմափակումների վերաբերյալ Լևոն Բարսեղյանն ընդդեմ Հայաստանի գործը (դիմում թիվ 17804/09, դիմումի հաղորդակցությունը Հայաստանի կառավարությանը 11.07.2011թ-ին):

[56] MUSHEGH SAGHATELYAN v. ARMENIA (Application no.23086/08, § 79), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-186114

ազատության սահմանափակումների անվերապահորեն կիրառման անհրաժեշտություն է եղել:[57]

Ի պատասխան, ՀՀ կառավարությունը պատասխանել է Եվրոպական դատարանին, որ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը առկա է եղել ազգի կյանքին սպառնացող վտանգ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15 հոդվածի իմաստով, և որ քաղաքացիների իրավունքների և ազատությունների նկատմամբ արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրով նախատեսված սահմանափակումներն ուղղակիորեն թելադրված և անհրաժեշտ են եղել:

Համապատասխանաբար, Հանրապետության նախագահի կողմից նման հրամանագրի ստորագրումը խստորեն համապատասխանել է Կոնվենցիայի 15 հոդվածով նախատեսված իրավունքների սահմանափակումների շրջանակին:[58]

5.8. Այսպես, ՀՀ կառավարությունը, 2010 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում՝ պարոն. Հրայր Թովմասյանի՝ որպես արդարադատության նախարար պաշտոնավարելու ընթացքում՝ նրա պատասխանատվության տիրույթում մշակել և իր ներկայացուցչի միջոցով Եվրոպական դատարան է ներկայացրել կառավարության հավաքական իրավական այնպիսի դիրքորոշում, որը ընդհանուր առմամբ համահունչ է Գործով դիմումատու Ռոբերտ Քոչարյանի և իր պաշտպանների կողմից թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի շրջանակներում իրեն առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով մեղադրանքից ի պաշտպանություն հնչեցվող դիրքորոշմանը և

---

[57] «Դարեսկիզբ» ՍՊԸ ընդդեմ Հայաստանի (դիմում թիվ 61737/08, դիմումի հաղորդակցումը առավարությանը 24/10/2011թ-ին) գործով ՄԻԵԴ հաղորդակցած դիմումի փաստերի շարադրանքը և հարցերը հետևյալ հղումով. http://hudoc.echr.coe.int/engcomold? i=003-3699149-4211981:

[58] Հայաստանի կառավարության ներկայացուցչի 27.02.2012թ.-ին Եվրոպական դատարան ներկայացրած առարկությունները կցված նույն փաստաթղթին, կետեր 21-33:

հակասում է նույն քրեական գործի շրջանակներում առաջադրված մեղադրանքի էությանը:

5.9. 2008 թվականի մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելու մասին Ռոբերտ Քոչարյանի կողմից հրամանագրի հրապարակումն ընկած է վերջինիս առաջադրված՝ սահմանադրական կարգի տապալման մեղադրանքի հիմքում:

5.10. Այսպես, պարոն Հրայր Թովմասյանը նախկինում բազմիցս ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարծիք է արտահայտել 2008թ. մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել Աշխատակարգային որոշման հիման վրա քննության ընդունված գործի շրջանակներում վերջինիս անաչառության նկատմամբ:

Ազգային ժողովը հարկ է համարում նշել, որ նման կասկածներ կարող են առաջանալ, քանի որ քննարկվող վարույթն ամեն դեպքում ընկալվում է որպես թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով դատավարական միջոցները սպառելու արդյունքում հարուցված սահմանադրական վարույթ, որը վերաբերում է Ռոբերտ Քոչարյանին և կարող է այս կամ այն կերպ ազդել նշված քրեական գործի ընթացքի վրա, մասնավորապես, օրինակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[4]-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավակարգավորումների լույսի ներքո:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

III. ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԷԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽԱԽՏՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

6.1. ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն.

«Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, ***էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում»:***

6.2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները սույն օրենքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով դադարեցվում են, եթե նա՝

1) խախտել է Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները.

2) պաշտոնավարման ընթացքում զբաղվել է քաղաքական գործունեությամբ.

3) ժամանակավոր անաշխատունակության պատճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չի եղել կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները, բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու դեպքերի.

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

4) նշանակումից հետո ձեռք է բերել այնպիսի ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որի հետևանքով այլևս ի վիճակի չէ կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները.

5) կատարել է էական կարգապահական խախտում»:

6.3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Էական կարգապահական խախտում է՝

1) Սահմանադրական դատարանի դատավորի՝ Սահմանադրական դատարանի նիստերից առանց հարգելի պատճառի մեկ տարվա ընթացքում երեք և ավելի անգամ բացակայելը.

2) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող Սահմանադրական դատարանի դատավորի կրկին կարգապահական խախտում կատարելը.

<u>3) Սահմանադրական դատարանի դատավորի այնպիսի արարք կատարելը, որը վարկաբեկում է Սահմանադրական դատարանի հեղինակությունը, կամ որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ»:</u>

6.4. Տվյալ դեպքում, ինչպես նշվեց վերը, առկա էր չորս ինքնուրույն հիմք, որոնցից յուրաքանչյուրն առանձին կարող էր հիմք հանդիսանալ, որպեսզի անկողմնակալ դիտորդի մոտ առաջանար օբյեկտից կասկած Գործով պարոն Հրայր Թովմասյանի անաչառության վերաբերյալ: Մասնավորապես.

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

1. Հրայր Թովմասյանի և Ռոբերտ Քոչարյանի ներկայացուցիչ Արամ Օրբելյանի միջև առկա անձնական բնույթի հարաբերությունների փաստը,
2. Հրայր Թովմասյանի՝ երկար տարիներ Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ լինելու, Սերժ Սարգսյանի վստահությունը վայելելու և Սերժ Սարգսյանի, ինչպես նաև Հայաստանի հանրապետական կուսակցության և Ռոբերտ Քոչարյանի միջև անձնական բնույթի, ընդհանուր շահագրգռվածության վրա հիմնված հարաբերությունների փաստը,
3. Հրայր Թովմասյանի կողմից իր և Արամ Օրբելյանի միջև առկա հարազատական հարաբերությունների հիմքով, ինչպես նաև Վահե Գրիգորյանի 28.08.2019թ. գրության մեջ իր մասով մատնանշված փաստերի հիմքով սեփական անձի Գործին մասնակցության անհնարինության հարցը շարունակաբար չբարձրացնելու, իսկ 28.08.2019թ. - ից հետո նաև բարձրացված հարցերին չանդրադառնալու փաստը,
4. Հրայր Թովմասյանի կողմից 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների և դրանց հաջորդած դատավարությունների վերաբերյալ նախկինում կարծիք արտահայտած լինելու փաստը,

հիմք են տալիս Ազգային ժողովին պնդելու, որ առկա են օբյեկտիվ կասկածներ առ այն, որ պարոն Հրայր Թովմասյանը չի եղել անաչառ Ռոբերտ Քոչարյանի դիմումը թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշման հիման վրա քննության ընդունելու արդյունքում հարուցված վարույթով:

6.5. Ազգային ժողովը համակցության մեջ դիտելով սույն դիմումի 6.4 կետում շարադրված հիմքերի առկայության պարագայում սեփական նախաձեռնությամբ դրանք չբարձրաձայնելու (Սահմանադրական դատարանի քննարկման առարկա

չդարձնելու), ինչպես նաև Սահմանադրական դատարանի մեկ այլ դատավորի կողմից դրանց մի մասի բարձրացման պայմաններում դրանց չանդրադառնալու և նշված պայմաններում Գործով որոշում կայացնելուն մասնակցելու փաստերը, գտնում է, որ Հրայր Թովմասյանը թույլ է տվել այնպիսի արարքներ, որոնք վարկաբեկում են Սահմանադրական դատարանի հեղինակությունը և (կամ) անհամատեղելի են դատավորի պաշտոնի հետ՝ էական կարգապահական խախտում:

6.6. Ազգային ժողովի կողմից նման պնդում կատարելու հիմք է ծառայում այն հանգամանքը, որ սույն դիմումում նկարագրված խախտումները բովանդակային առումով խաթարում են արդար դատաքննության իրավունքի բուն էությունը, այսինքն գործ ունենք, ոչ թե առանձին դատավորի օրենքի սխալ կիրառման հետ, այլ ի սկզբանե բովանդակային առումով անաչառ դատարանի բացակայության հետ:

Հարկ է նշել, որ թվարկված հիմքերի մեջ հատուկ ուշադրության է արժանի այն, որ Հրայր Թովմասյանի կողմից անգամ փորձ չի կատարվել անդրադառնալ Վարույթին սեփական անձի մասնակցության անհնարինության առկա և բարձրացվող հիմքերին, փորձել փարատել առկա կասկածները՝ ապահովելու համար ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կայացվող որոշման վստահելիությունը և անառարկելիությունը:

Փոխարենը, Հրայր Թովմասյանի կողմից պարզապես արհեստականորեն անտեսվել է բարձրացվող հարցերի գոյությունը, ինչպիսի վարքագիծը միանշանակ անհամատեղելի դատավորի պաշտոնի հետ և վարկաբեկում է Սահմանադրական դատարանի հեղինակությունը:

6.7. Հրայր Թովմասյանի կողմից մասնավորապես խախտվել են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերով և նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով պահանջները:

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

6.8. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը: ***Եթե Սահմանադրական դատարանի դատավորը կատարել է էական կարգապահական խախտում*** *կամ ձեռք է բերել Կառավարության որոշմամբ սահմանված այնպիսի ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որի հետևանքով այլևս ի վիճակի չէ կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները,* ***ապա Ազգային ժողովի որոշման նախագիծը կարող է ներկայացվել համապատասխան հիմքերի մասին հայտնի դառնալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:***

6.9. Տվյալ դեպքում, սույն դիմումի ներկայացման հիմքերի ի հայտ գալուց հետո, մասնավորապես՝

1. Հրայր Թովմասյանի կողմից թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված գործով մինչև վերջնական որոշման կայացումը սեփական անձի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը չբարձրացնելը,
2. 28.08.2019թ. Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանի կողմից, ի թիվս այլոց, Հրայր Թովմասյանի Գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցի բարձրացնելու պայմաններում այդ հարցը մինչև վերջնական որոշման կայացումը չքննարկելը,

<u>և, որ վերոնշյալ երկու կետերում նկարագրված պայմաններում</u>

Հավելված 1

ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծի

3. Հրայր Թովմասյանի մասնակցությամբ թիվ ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված գործով թիվ ՍԴՈ-1476 որոշման կայացումը,՝

Ազգային ժողովը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմում է ՀՀ Սահմանադրական դատարանին ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր պարոն Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով:

Սույն դիմումին կից ներկայացվում են՝

1. Դիմումում վկայակոչված տեսանյութերը էլեկտրոնային կրիչով,
2. Դիմումում վկայակոչված հարցազրույցների տպագիր օրինակները:

Հյուսիսային դարձ

Դատավորների մեջ կան մեծ թվով լուսավոր, հայրենասեր, իրենց գործի նվիրյալ մարդիկ. Հրայր Թովմասյան

14:48 • 03.06.19

ԻՐԱՎՈՒՆՔ

Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը Tert.am-ի հետ զրույցում ասում է, որ դատաիրավական բարեփոխումները շարունակական գործընթաց են և, բնականաբար, Հայաստանում ևս նման բարեփոխումների անհրաժեշտություն կա նաև այսօր: ՍԴ նախագահը նաև անդրադարձել է դատավորների վեթինգի թեմային՝ նշելով, որ ինքը հակված է կարծելու, որ Հայաստանում դատավորների նկատմամբ վեթինգ չի կիրառվելու: Նրա կարծիքով՝ առկա խնդիրները հնարավոր է լուծել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները կատարելագործելու, ապագա հակակոռուպցիոն հանձնաժողովի ողջ ներուժն արդյունավետ օգտագործելու ճանապարհով: Հրայր Թովմասյանը վստահեցնում է, որ Հայաստանում դատավորների մեջ կան մեծ թվով լուսավոր, հայրենասեր, իրենց գործի նվիրյալ մարդիկ, որոնք մեծամասնություն են կազմում:

– Ինչպես կգնահատեք երկրում ստեղծված քաղաքական վիճակը և ինչ կասեք դատարանների շուրջ ստեղծված իրավիճակի մասին:

– «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Ուստի, այս սկզբունքների պահպանման պարագայում քաղաքական իրավիճակի գնահատականն ամբողջական չի ստացվի, իսկ գնահատականներ տալ, որոնք ոչ ամբողջական լինելու պատճառով չեն ընկալվի, որոնք տարակարծիք մեկնաբանությունների տեղիք կտան, չեմ ցանկանա: Ինչ վերաբերում է դատարանների շուրջ ստեղծված իրավիճակին, հաշվի առնելով, որ մատնանշածս հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատական իշխանության գործունեության վերաբերյալ քննարկումները և հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չեն համարվում, իմ դիտարկումները կարող եմ ներկայացնել:

Անկախության առաջին տարիներից սկսած՝ ես չեմ կարող առանձնացնել թեկուզ կարճատև որևէ ժամանակահատված, որի ընթացքում մենք դատական իշխանության ոլորտում արձանագրած լինենք հետընթաց: Բոլոր կառավարությունների, արդարադատության բոլոր նախարարների առաջնահերթ խնդիրը եղել է դատաիրավական բարեփոխումները: Եթե համեմատենք 90-ականների դատական իշխանությունը այսօրվա հետ, ապա դրական առումով փոփոխությունները ակնառու են՝ օրենսդրության որակը, դատավորների գիտելիքները, ընդունված որոշումների որակը, հիմնավորվածությունը, դատական իշխանության կազմավորման կարգը, շենքային պայմանները և այլն: Սակայն ոչ մի կառավարություն, ոչ մի արդարադատության նախարար չի ասել, որ դատական իշխանությունում առկա վիճակը մեզ գոհացնում է (նույնը, բնականաբար, կարելի է ասել նաև իշխանության մյուս ճյուղերի մասին) ու այլևս ոչինչ չկա անելու: Դատաիրավական բարեփոխումները շարունակական գործընթաց են, այդ մասին խոսում են անգամ Գերմանիայում և ԱՄՆ-ում և, բնականաբար, Հայաստանում ևս պետք է արձանագրենք, որ նման բարեփոխումների անհրաժեշտություն կա նաև այսօր:

- Ցանկանում եք ասել, որ բոլոր դատավորները բանիմաց են ու անկաշառ:

- Ես նման բան չասացի: Բոլոր իշխանությունների ժամանակ՝ մի դեպքում մի քիչ շատ, մյուս դեպքում քիչ, եղել են դատավորներ, որոնք դատապարտվել են հենց կոռուպցիոն հանցագործությունների համար, այն կարծիքին չեմ, որ այսօր նման դատավորներ ընդհանրապես այլևս չկան Հայաստանում: Բայց դատական իշխանության վերաբերյալ ընդհանրական դատողությունները վտանգավոր են, միգուցե այլ դեպքերում՝ ևս,

սակայն այստեղ մենք գործ ունենք իշխանության մի ճյուղի հետ, որն ի տարբերություն քաղաքական իշխանության, չունի ամբիոն հրապարակայնորեն բոլոր մեղադրանքներին պատասխանելու համար:

– Ինչո՞վ եք պայմանավորում դատական իշխանության նկատմամբ ցածր վստահությունը:

– Բնավ էլ այն կարծիքին չեմ, որ այդ վստահությունը ցածր է կամ ավելի ճիշտ՝ ավելի ցածր է, քան այլ ոլորտների՝ ասենք առողջապահության, կրթության կամ ոստիկանական համակարգերի հանդեպ: Ես ճշգրիտ չգիտեմ, թե բնակչության քանի տոկոսն է վստահում դատարաններին, սակայն հաշվի առնելով հայցերի, դիմումների թվի անընդհատ աճը, հաշվի առնելով հանրային իշխանության դեմ կայացրած դատական ակտերի թվի աճը, կարելի է փաստել, որ վստահությունը բարձրանում է, արդյոք բավարար տեմպերով՝ չեմ կարող ասել: Հետաքրքիր է պարզել, թե դժգոհների քանի տոկոսն է դատարանի հետ շփվելու արդյունքում դժգոհ դատարանից և քանի տոկոսն է լսելով, կարդացածով ձևավորել իր դժգոհությունը. վստահ եմ, որ երկրորդ խումբն ավելին է, քան առաջինը: Մյուս կողմից ակնկալել, որ ազատազրկման դատապարտողից, հօգուտ ուրիշի քեզանից գումար գանձողից պետք է գոհունակություն սպասել, միամտություն է: Կա նաև մեկ այլ երևույթ, երբ այդ կարծիքը ձևավորում են առանձին փաստաբանները, որոնք ցանկացած պարտված գործի մեղավոր, իրենց հաճախորդի մոտ առնվազն, համարում են դատավորներին: Պիտի նկատեմ միաժամանակ, որ այս երևույթը փաստաբանական պալատի հետևողական աշխատանքի արդյունքում փոքրանում է: Մյուս կողմից, չի կարող չէ՞, որ բոլոր դատական ակտերից բոլորը դժգոհ լինեն, կան չէ՞ նաև մարդիկ, որոնք գոհ են, բայց նրանք դա չեն բարձրաձայնում. միգուցե և դրա անհրաժեշտությունը չկա, իսկ դժգոհողները բարձրաձայնում են, ու ստացվում է, որ բոլորը դժգոհ են, ինչն էլ բերում է այդ վստահության նվազմանը:

Դատավորի աշխատանքը ես համարում եմ հանրային իշխանության ոլորտում ամենաբարդն ու պատասխանատուն, և շատ կարևոր է, որ նրանք արժանանան իրենց բարձր կարգավիճակին ու պատասխանատվությանը համապատասխանող վերաբերմունքի, հարգանքի:

– Հայաստանում տեղի է ունեցել հեղափոխություն, իշխանափոխություն, օրենսդիր և գործադիր իշխանությունն անցել է այլ քաղաքական ուժի: Արդյո՞ք դատական իշխանությունում այդ փոփոխությունները ևս չպետք է կատարվեն:

– Նկատի ունեք դատական իշխանությունը և՞ս անցնի այն քաղաքական ուժին, որը մեծամասնություն է օրենսդիրում և գործադիրում:

Եթե առաջնորդվում ենք այն կանխավարկածով, որ օրվա քաղաքական իշխանությունը պետք է իշխանություն լինի նաև դատարանում, ապա պետք է ազնիվ լինել ու Սահմանադրության մեջ այդպես էլ գրել, որ խորհրդարանական ընտրություններից կամ կառավարություն կազմավորելուց հետո վարչապետը մեկ ամսվա ընթացքում նշանակում է բոլոր դատավորներին. դա կլինի ազնիվ, բայց կլինի մեծագույն սխալ: Դա կլինի իրավական պետության տապանաքարը: Դատական իշխանության անկախությունն առաջին հերթին քաղաքական անկախությունն է, անկախ օրվա քաղաքական իշխանություններից: Հենց դրանով է պայմանավորված, որ դատավորների լիազորությունների ժամկետները շատ ավելի երկար են, քան նրանց նշանակող մարմնի լիազորությունների ժամկետը, և ամենակարևորը՝ դատավորները անկախ են, քանի որ ի տարբերություն քաղաքական իշխանության ներկայացուցիչների, դատավորներին քաղաքական դրդապատճառներով աշխատանքից ազատել չի կարելի:

Հարցն ունի այլ ասպեկտ: Տեսեք, կայացած իրավական, ժողովրդավարական պետություններում, որտեղ իշխանափոխությունը սովորական երևույթ է, որևէ մեկի մտքով չի անցնում քաղաքական իշխանության գալուն պես փոխել ողջ դատական համակարգը: Դուք պատկերացնու՞մ եք՝ այդ դեպքում ինչ կկատարվեր:

Սակայն նորանկախ երկրներում կամ հետխորհրդային երկրներում քաղաքական իշխանափոխության արդյունքում դատական իշխանափոխության դրսևորումներ կան: Դա առկա է եղել Վրաստանում, Ուկրաինայում, Չեխիայում, Ալբանիայում և մի շարք այլ երկրներում: Ակնհայտ է, որ այդ արագ փոփոխությունների փորձն այս երկրներում ոչ միայն առկա խնդիրները չի լուծել, այլ երբեմն հանգեցրել է ավելի բարդ, անգամ անլուծելի խնդիրների:

Եթե օրվա քաղաքական իշխանության նպատակը դատական իշխանությանն իրեն հնազանդեցնելն է կամ ժողովրդահաճո քայլեր կատարելը, ապա վստահեցնում եմ՝ երկարաժամկետ ապագայում դա փակուղային ու հետընթացի ճանապարհ է: Եթե խնդիրը դատական իշխանության բարեփոխումն է, ապա այստեղ տեղին է հին չինական իմաստությունը՝ «դանդաղ շտապիր» կամ «անհանգստացիր հերթականությամբ»: Այստեղ հավասարակշռված, կշռադատված, խորը ուսումնասիրված քայլերի, գործողությունների ամբողջություն է անհրաժեշտ, որում շատ կարևոր է հենց դատական իշխանության ներգրավվածության հարցը: Բոլորին թվում է, թե իրենք գիտեն դատական իշխանությունում առկա խնդիրների լուծման բանալին: Վստահեցնում եմ՝ դատավորներից լավ այդ խնդիրների լուծման բանալին ոչ ոք չգիտի:

– Օրեր առաջ մի խումբ մարդիկ հավաքվել էին նաև Սահմանադրական դատարանի առաջ, ինչից էին նրանք դժգոհ:

– Ես ինքս մեծ ցանկություն ունեմ իմանալու, թե հավաքվածներն ընդհանրապես Սահմանադրական դատարանի որ որոշումներից էին դժգոհ և, մասնավորապես, իմ պաշտոնավարման ընթացքում ընդունված որ որոշումներից էին դժգոհ: Կցանկանայի նաև իմանալ՝ Սահմանադրական դատարանի առաջ հավաքված անձանցից քանիսն էին իրավաբան, քանիսն էին ՍԴ որևէ որոշում կարդացել ընդհանրապես: Իսկ եթե դժգոհ չեն կամ իրավաբան չեն, ապա կարող եմ ես արդյոք մտածել, կամ օբյեկտիվորեն մարդկանց մոտ կարող է նման տպավորություն ստեղծվել, որ այդ հավաքի նպատակը ոչ թե նախորդ որոշումներից դժգոհելն էր, այլ ապագա ընդունվելիք որոշումների վրա ազդելը: Եթե այդպես է, ապա դա հանցագործություն է, եթե որևէ մեկը մտածում է, որ իմ կամ Սահմանադրական դատարանի այլ դատավորների վրա նման կերպ կարող է ազդել, ապա մեծապես սխալվում է: Սահմանադրական դատարանի դատավորները նման դրսևորումներից ճնշվողը չեն, իզուր ջանքեր մի գործադրեք, նման վարքագիծը լավ տեղ չի տանելու: Ես չեմ պատրաստվում խորհրդակցական սենյակի պատուհանից նայել, թե քանում քանի մարդ կա հավաքված, ու որ մասը՝ ինչ որոշում է ուզում, որ ընդունեմ: Որոշում կայացնելիս ես և դատարանի մյուս դատավորները մեկ տեղ ունենք նայելու՝ Սահմանադրությանը: Բացի Սահմանադրությունից, այլ տեղ նայելու իրավունք չունենք, այլ տեղ նայելը իրավական պետության վերջն է, այլ տեղը, միգուցե, ժամանակի կարճ հատվածում դատարանի դիմացը հավաքվածների մի մասի հարգանքին արժանանալն է, սակայն երկարաժամկետ առումով այդ նույն ժողովրդի շահերի ոտնահարում է, եթե չասեմ դատավարություններ, բախումներ: Ի վերջո, ժողովրդի հավաքական կամքի արտահայտման այլ ձև, քան հանրաքվեն է, ինձ հայտնի չէ:

– Ինչպես եք վերաբերվում դատարանների դռները փակելուն:

– Հաշվի առնելով, որ տարբեր գնահատականներ կան, որակումներ կան, այդ թվում՝ իրավական որակումներ, որոնք կարող են դառնալ նաև Սահմանադրական դատարանի քննության առարկա, ես ձեռնպահ կմնամ գնահատական տալուց, ուղղակի կասեմ, որ դատարանների դռները փակել չի կարելի, անթույլատրելի է, և որ դա ինձ համար նման էր վատ երազի. հուսով եմ, որ այն այլևս երբեք չի կրկնվի:

– Իսկ ինչպես վարվել վատ դատավորների հետ:

– Կաշառակեր դատավորներին՝ դատապարտել ազատազրկման, կողմնապահ դատավորներին, իրենց գործը չիմացող դատավորներին՝ հեռացնել համակարգից, սխալ թույլ տված դատավորին՝ սխալի չափով պատժել: Վստահեցնում եմ, որ այս հարցում օրվա իշխանություններն ավելի լավ դաշնակից, քան ազնիվ, անաչառ դատավորներն են, չունեն:

– Ինչպես եք վերաբերվում անցումային արդարադատությանը, վեթինգին:

– Ցանկացած նոր ինստիտուտ պետք է համապատասխանի Սահմանադրությանը: Պատահական չէ, որ բոլոր փորձագետները, բոլոր մասնագիտացած միջազգային կազմակերպությունները միաբերան պնդում են, որ բոլոր քայլերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Ավելին՝ այս փուլում չեմ կարող ասել, քանի որ գրեթե վստահ եմ, որ այդ կարգավորումները մի օր դառնալու են Սահմանադրական դատարանի քննության առարկա: Ուզում եմ ավելացնել միայն, որ, իմ կարծիքով, մեր Սահմանադրությունը դատական իշխանության ոլորտում առկա խնդիրների լուծման համար ունի չիրացված բավականին մեծ ռեսուրս, և մինչ նոր ինստիտուտների կիրառումը, կարծում եմ, լավ կլիներ այդ ողջ պոտենցիալը օգտագործել և

չհաջողելու պարագայում նոր միայն փորձել գտնել նոր գործիքակազմեր: Միջազգային փորձագետները պնդում են, իսկ միջազգային փորձը վկայում է, որ վեթինգը ծայրահեղ միջոց է, ու այն կարող է կիրառվել, երբ մնացած գործիքակազմերն ի զորու չեն այլևս առկա խնդիրները լուծելու: Ես հակված եմ կարծելու, որ Հայաստանում դատավորների նկատմամբ վեթինգ չի կիրառվելու: Կարծում եմ, որ առկա խնդիրները հնարավոր է լուծել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները կատարելագործելու, ապագա հակակոռուպցիոն հանձնաժողովի ողջ ներուժն արդյունավետ օգտագործելու ճանապարհով:

– Ինչպե՞ս վարվել այն դատավորների հետ, որոնք նախորդ իշխանություններին ծառայություններ են մատուցել:

– Եթե ծառայություններ մատուցել ասելով նկատի ունեք իշխանության այս կամ այն ներկայացուցչի հրահանգով, պատվերով ապօրինի դատական ակտ կայացնելը, ապա թե՛ դատավորին և թե՛ պատվիրատուին բռնել ու դատել: Բայց բռնել, ապացուցել, հաստատել ու նոր դատել: Ընդհանրացումներն այստեղ տեղին չեն: Հիշենք, որ ամեն մի դատավոր անհատ է, ունի իր անձնական կյանքը: Բոլորին նույն կաթսան գցելու փորձը վտանգավոր է: Կարծում եմ՝ վտանգավոր է նաև մի ողջ համակարգ անվանել նախորդ իշխանությունների մնացորդ, այդ դեպքում նույն հաջողությամբ նախորդ իշխանության մնացորդ կարելի է անվանել ոստիկանությանը, դատախազությանը, քրեակատարողական ծառայությանը, դիվանագիտական կորպուսը, քննչական մարմիններին և այլն. դա, կարծում եմ, սխալ է:

Վստահեցնում եմ՝ դատավորների մեջ կան մեծ թվով լուսավոր, հայրենասեր, իրենց գործի նվիրյալ մարդիկ, ու այդ մարդիկ մեծամասնություն են կազմում:

– Արդյոք Արամ Օրբելյանը Ձեր սանիկն է, եթե այո, ապա այն փաստը, որ նա Ռոբերտ Քոչարյանի դատապաշտպանն է, չի՞ ազդի Ձեր դիրքորոշման վրա:

– Այո՛, Արամ Օրբելյանն իմ սանիկն է, ես իր և՛ մկրտության, և՛ պսակադրության քավորն եմ: Արամը, իր ընտանիքի մյուս անդամներն ինձ շատ հարազատ մարդիկ են, այդքանը: Արամ Օրբելյանը այս գործում նշանակություն, ազդեցություն չի կարող ունենալ, այնպես, ինչպես որևէ մեկը չի կարող ունենալ, այդ թվում՝ հայրս ու մայրս, կինս, երեխաներս: Այն պահին, երբ անձնական կյանքս, ընկերներիս, հարազատներիս չկարողանամ տարանջատել դատավորի անաչառ լինելու պարտականությունից, մեկ րոպե անգամ չեմ աշխատի որպես դատավոր: Ի վերջո, իմ անաչառությունը առաջին հերթին իմ ընտանիքին, իմ հարազատներին է պետք: Հայաստանը փոքր երկիր է, իրավական հանրությունում շատերն են իրար ընկեր, բարեկամ, իսկ մենք էլ այլ երկրներից դատավորներ չենք կարող ներմուծել (ժպտում է – Հեղ.), ուստի յուրաքանչյուր դատավոր պետք է տարանջատի ընկեր-բարեկամն իր պարտականությունից՝ արդարադատություն իրականացնելիս:

Ցավով եմ արձանագրում, որ հանրային ընկալման մեջ մեղադրյալն ու վերջինիս պաշտպանները առավելապես նույնականացվում են, և մեղադրյալի նկատմամբ հանրության կարծիքը, վերաբերմունքը սկսվում է տարածվել նաև դատապաշտպանների վրա. սա անընդունելի է, պետք է հստակ տարանջատել մեղադրյալի շահը վերջինիս պաշտպանների շահից:

Սահմանադրական դատարանի դատավորներից մեկի քավորն էլ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ է, մյուսի բարեկամուհին՝ քաղաքապետ, մյուսը նշանակվել է Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից: Այս ամենը Սահմանադրական դատարանի դատավորների համար գործը քննելիս ոչ թե երրորդական հանգամանք են, այլ ընդհանրապես հանգամանք չեն:

– Դատավորների միությունն այս ժամանակահատվածում երկու հայտարարություն է արել, Դուք համաձա՞յն եք այդ հայտարարությունների հետ:

– Փոքրիկ, միգուցե խմբագրական վերապահումներով, լիովին կիսում եմ այդ հայտարարությունների բովանդակությունը:

– Իշխանության բոլոր ճյուղերին էլ քննադատում են, ինչո՞ւ են դատավորներն այդքան ցավագին տանում իրենց հասցեին արված քննադատությունը:

– Քաղաքական իշխանությունը մեկ քաղաքական թիմ է, անգամ, երբ այն կոալիցիոն է, և անկախ այն հանգամանքից, թե այդ իշխանության որ օղակն է թերացել, քաղաքական իշխանությունը կոլեկտիվ պատասխանատվություն է կրում, ուստի ընդհանրական քննադատությունը գործադիր կամ օրենսդիր իշխանության հասցեին միանգամայն հասկանալի է: Նույնը չի կարելի ասել դատական իշխանության վերաբերյալ, քանի որ այստեղ չկա ու չի կարող լինել քաղաքական թիմ, քաղաքական ընդհանուր պատասխանատվություն, այստեղ յուրաքանչյուր դատավոր անկախ է նաև մնացած դատավորներից, և պատասխանատվությունը անհատականացված է, դատավորը չի կարող պատասխանատվություն կրել այլ դատավորի գործողությունների համար, չի կարող նաև քննադատվել մյուսի քայլերի համար:

Մյուս կողմից, եթե քաղաքական իշխանության նկատմամբ քաղաքական ճնշումներն օրինական գործիք են, ապա նույնը չի կարելի ասել դատական իշխանության պարագայում, միանգամայն հստակ այդ մասին ասված է դատավորների միության հայտարարության մեջ. «Հասարակության անդամները պարտավոր են հարգել դատավորի անկախության սկզբունքը և դատավորի կամ վերջինիս կայացրած դատական ակտերի վերաբերյալ իրենց քննադատությունը կառուցել այնպես, որ այն չվերածվի դատավորի նկատմամբ քողարկված ճնշումներ կատարելու, արդարադատության իրականացմանը միջամտելու, դատավորի պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու միջոցի»:

Լիովին կիսում եմ նաև Դատավորների միության հայտարարությունում արված այն պնդումը, որ բոլոր հանրային պաշտոնատար անձանց շարքում դատավորներին տրված է իրենց հեղինակության ամենաբարձր պաշտպանությունը, իսկ նրանց հասցեին հնչող քննադատության ընդունելի շրջանակները պետք է ունենան ամենանեղ սահմանները: Այս համատեքստում հատկապես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ դատավորներն ի պաշտոնե չունեն իրենց հանդեպ հնչող քննադատությանը պատասխանելու անհրաժեշտ գործիքակազմ: Այսինքն՝ դատավորներն այնպիսի պաշտոնատար անձինք են, որոնք իրավասու չեն պատասխանելու իրենց ուղղվող քննադատություններին:

Դատական իշխանությանը քննադատելուց առաջ, կարծում եմ, պետք է լուծել մի շարք հարցեր: Առաջին հերթին պետք է լուծել դատավորների գերծանրաբեռնվածության խնդիրը, ես դժվար եմ պատկերացնում այն դատավորի վիճակը, ում վարույթում մի քանի տասնյակ քրեական գործեր են, մի քանի հարյուր քաղաքացիական գործեր կամ հազարի հասնող վարչական գործեր: Մենք պետք է անդրադառնանք նաև դատավորների սոցիալական երաշխիքներին, գործադիր իշխանության տարբեր մարմիններ, ինչպես տեսանք, միլիոն դրամների հասնող պարգևավճարներ են կարողանում տալ, ես դրան դեմ չեմ, բայց ինչպե՞ս դա բացատրել դատավորին, որը, կարող է պարզվի, մեկ այլ մարմնի քարտուղարուհուց ցածր եկամուտ ունի:

– Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշ դատավորներ հայտարարություն էին տարածել՝ կապված Ձեր երկու որոշումներում արված գնահատականների հետ, ինչպե՞ս կմեկնաբանեք դա:

– Երբ կարդում ես մամուլը, կամ երբ Դուք օգտագործում եք Ձեր որոշումը, այլ ոչ թե Սահմանադրական դատարանի որոշումը, սխալ տպավորություն եք ստեղծում, որ կարծես Սահմանադրական դատարանը Հրայր Թովմասյանն է: Ասեմ, որ դա թյուր կարծիք է: Ես Սահմանադրական դատարանի դատավորներից մեկն եմ, և իմ քվեարկության կշիռը հավասար է առանձին վերցված յուրաքանչյուր դատավորի քվեարկության կշռին և ոչ ավելին: Սահմանադրական դատարանը կոլեգիալ մարմին է:

Ինչ վերաբերում է բուն հարցին, ապա այնպես չէ, որ այս երկու ատյանները այլ երկրներում հաշտ ու խաղաղ են ապրում և տարաձայնություններ չունեն, բայց ինձ հայտնի չէ որևէ երկիր, որևէ դեպք, երբ այդ, այսպես ասած, «կռվում» հաղթողը Սահմանադրական դատարանը չլինի: Սահմանադրական դատարանի աշխատակազմն այդ հարցի կապակցությամբ հաղորդում տարածել է, ուստի ես ձեռնպահ կմնամ մյուս դատարանների դատավորների հայտարարությունները մեկնաբանելու կամ դրա մասին կարծիք հայտնելու գայթակղությունից:

Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտվում են հատկապես Սահմանադրության

նորմերի վերաբերյալ իրավական դիրքորոշումներ, այլ ոչ թե գնահատական է տրվում որևէ դատավորի վարքագծին կամ մասնագիտական որակներին: Հետևաբար՝ դա որևէ կերպ ողջամտորեն չպետք է ընկալվի որպես որևէ դատավորի հեղինակազրկում:

Հեղինակ Բեթղեհեմ Արաբյան

Արարատ Միրզոյանի հայտարարությունը դատարանի անկախությանը միջամտելու հերթական փորձ է. Արամ Օրբելյան

17:05, 16.09.2019
Տարածաշրջան: Հայաստան
Թեմա: Քաղաքականություն

Արարատ Միրզոյանը, օգտվելով ԱԺ նախագահի կարգավիճակից եւ արտահերթ հայտարարություն անելու հնարավորությունից, հանդես է եկել հայտարարությամբ, որը չի կարող որակվել թույլատրելի եւ ակնհայտորեն պետք է դիտարկվի որպես դատարանի անկախությանը հերթական միջամտության փորձ: Այդ մասին NEWS.am-ի հետ զրույցում ասաց Ռոբերտ Քոչարյանի պաշտպանական խմբի անդամ, փաստաբան Արամ Օրբելյանն՝ անդրադառնալով ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը հայտարարությանը:

«Սահմանադրական դատարանի որոշման քննարկումները մի քիչ չափից ավելի շատ են. Սահմանադրական դատարանի որոշումը կա, այն պետք է ընդունվի, եւ հետագա քննարկմանը լավն է կամ վատն է, ճիշտ է, թե սխալ, քննարկման ենթակա չէ: Օբյեկտիվ իրականության մեջ կա դատարանի որոշում , եւ եթե այդ որոշումը որոշակի կերպով չեն հասկանում որոշ մասնագետներ, խոսքը Արարատ Միրզոյանի մասին չէ, ապա դա իրենց խնդիրն է: Կա Սահմանադրական դատարանի որոշում, որն արձանագրել է օրենսդրական բաց, եւ ԱԺ-ն քննադատելու փոխարեն, ճիշտ կանի, որ օրակարգ ձեւավորի նշված բացը լրացնելու եւ Սահմանադրությանը Քրեական դատավարության օրենսգիրքը համապատասխանեցնելու ուղղությամբ:. Հիմա մենք տեսնում ենք, ամեն գնով որոշում ստանալու գործընթաց»,-նշեց Օրբելյանը:

Ինչ վերաբերում է Վենետիկի հանձնաժողով եւ ՄԻԵԴ ուղղված ՍԴ դիմումներին առնչվող ԱԺ նախագահի հարցադրումներին, ապա, ըստ Օրբելյանի, Սահմանադրական դատարանի որոշումը տեղադրված է ՍԴ կայքում, այնտեղ, որտեղ տեղադրված են Վենետիկի հանձնաժողովին ուղղված հարցերը. «Եթե չեմ սխալվում՝ ՍԴ աշխատակարգային որոշումների շարքում առնվազն ես կարդացել եմ գործը կասեցնելու եւ Վենետիկի հանձնաժողովի եւ ՄԻԵԴ-ի որոշումները: Դրանք հրապարակված են, ցանկացած մարդ կարող է մտնել կայք եւ տեսնել որոշումը եւ առաջադրված հարցադրումները: Հարցադրումներն ուղղակիորեն վերաբերվում են Վենետիկի հանձնաժողովի իրավասությանը, սահմանադրական իրավունքի եւ մարդու իրավունքի մասով ՄԻԵԴ-ի իրավասությանը եւ Կոնվենցիայի որոշակի դրույթների մեկնաբանությանը: Ինչ նյութեր են ուղարկվել որպես նյութեր, ոչ թե որպես հարցադրումներ Վենետիկի հանձնաժողով եւ ՄԻԵԴ անգլերեն լեզվով ես տեսել եմ, հայերեն լեզվով դրանց կարիքը չեմ ունեցել, որովհետեւ այդ մարմինների աշխատանքային լեզուներն անգլերենն ու ֆրանսերենն են: Իսկ թե ոնց են կազմվել, խնդրեմ, դա ՍԴ-ից կարելի է պնդել եւ ստանալ, բայց ակնհայտ է, որ դիմումները, որոնք կազմվել եւ ներկայացվել են ՍԴ եւ փաստաթղթերը եղել են հայերեն, այսինքն մենք կազմել ենք հայերեն, եւ, հարցադրումները, թե ինչ հարցեր տալ Վենետիկի հանձնաժողովին եւ ՄԻԵԴ-ին եղել են հայերեն, հետեւաբար, ինչպես ասացի այդ որոշումը հրապարակված է: Թե ինչի մասին է խոսքը, ինչ են ուզում հայերեն ստանալ, խնդրեմ, երբ որ կլինի կարող են ՍԴ-ից պարզել»:

Օրբելյանը հիշեցրեց, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական մարմիններից մեկն է, իր կարգավիճակով ավելի ցածր չէ քան խորհրդարանինը. «Ոչ ԱԺ-ն, ոչ ԱԺ նախագահը, ոչ Կառավարությունը, ոչ էլ կառվարության ղեկավարը, օրենսդիր կամ գործադիր մարմինների ոչ մի ներկայացուցիչ իրավունք չունի հայտարարություն անել այդ ձեւով եւ միջամտել գործընթացին: Ես տեսնում եմ, որ փորձ է կատարվում եղած հատուկ կարծիքները, որոնք շատ դրական են եւ կարեւոր ինստիտուտ են, փորձել օգտագործել ինչ-որ բաներ մեկնաբանելու համար: ՍԴ անդամ Ֆելիքս Թոխյանը գտնում է, որ շտապողականություն է ցուցաբերվել, դա պարոն Թոխյանի իրավունքն է եւ դրական է, որ ինքն այդ մասին արտահայտվում է, բայց դա որեւէ կերպ չի կարող մեկնաբանվել , որ հաստատված հանգամանք է, որ շտապողականություն է ցուցաբերվել, որովհետեւ ՍԴ մնացած կողմ քվեարկած դատավորները գտել են, որ շտապողականություն չի ցուցաբերվել: Այսինքն, պետք է միշտ հասկանալ, որ կա դատարանի որոշում, եւ կան հատուկ կարծիքներ: Հատուկ կարծիքները շատ կարեւոր ինստիտուտ են, բայց դրանք չեն կարող օգտագործվել քաղաքական մանիպուլյացիաների համար: Դա ընդամենը դատարանի անդամներից մեկի հատուկ կարծիքն է, որը տրվում է երկու դեպքում, դա ասում եմ Վենետիկի հանձնաժողովի ձեռնարկի հիման վրա, երբ որ դատավորը չի ցանկանում ասոցացվել որոշման հետ, եւ երբ դատավորը ցանկանում է ինչ-որ դիրքորոշում հայտնել, որպեսզի հետագայում քննարկման առիթ դառնա գիտական եւ ակադեմիական շրջանակներում ոչ քաղաքական նպատակներում օգտագործելու համար»:

Անդրադառնալով ՍԴ կազմավորմանն առնչվող հայտարարության հատվածին, Օրբելյանը նշեց, որ սահմանադիրը՝ ՀՀ ժողովուրդը Սահմանադրությանը կողմ քվեարկելով, չի պնդել, որ 2018թ. ապրիլի 10-ին, երբ Սահմանադրությունը նոր տեսքստով ուժի մեջ կմտնի, պետք է Սահմանադրական դատարանը փոխվի. «Ավելին, նման ցանկությունը կլիներ ոչ լեգիտիմ: Չի կարող Սահմանանադրություն փոխելու միակ նպատակը լինել երկրի ՍԴ դատավորների փոփոխությունը: Խոսքը չի վերաբերում միայն ՍԴ դատավորների փոփոխությանը, այլ ընդհանրապես դատավորների խոփոխության մասին է: Դատավորի գործառույթների շարունակելիությունը կամ դատավորի անփոխարինելիությունը իր հիմքում ունի հենց այն հանգամանքը, որ դատավորներին չպետք է փոխվեն, եթե ընդհանրապես իշխանություն է փոխվում, ինչը փորձում է հակառակը պնդել գործող կառավարությունն ու ԱԺ-ն: Նման միտը ապօրինի է իր հիմքով, որովհետեւ հենց պետական իշխանության կառուցվածքը իրավական պետության կոնցեպտը՝ իրավական ուժերի տարանջատումը հենց այն է, ինչը նախատեսում է, որ օրենսդիր եւ գործադիր իշխանություններն ավելի հաճախ կարող են փոխվել , ինչը չի ենթադրում, որ դա կարող է բերել դատական իշխանության փոփոխության: Արդոք պե՞տք են փոփոխություններ դատական համակարգում, պատասխան՝ այո: Դատական համակարգում պետք են փոփոխություններ: Արդոք այդ բարեփոխումները պետք է լինեն վիրահատական , պատասխանը՝ ոչ: Բոլոր հետազոտությունները ցույց են տալի, որ երկրում դատական համակարգի վիճակը էապես ավելի լավ է, քան պատկերացնում են կառավարության ներակայացուցիչները եւ բնակչության մի մասը: 2016թ. մի շարք կազմակերպությունների կողմից ԵՄ նախաձեռնությամբ Հայաստանում անցկացվել է դատական համակարգի վիճակի ուսումնասիրություն, ըստ որի, իրավիճակը շատ ավելի լավ է, քան մարդիկ մտածում են»:

Նախկին վարչապետեր

Ռոբերտ Քոչարյան

Կենսագրական տվյալներ

Ամսաթիվ, տարեթիվ, ծննդավայր
31 օգոստոսի, 1954թ., ք. Ստեփանակերտ

Կրթություն
1977-1982 թթ. - Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ:

Աշխատանքային գործունեություն

1975-1977 թթ. - աշխատանքային գործունեություն Ստեփանակերտի և Մոսկվայի տարբեր ձեռնարկություններում
1980-1981 թթ. - Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարան՝ ինժեներ-մեխանիկ
1981-1985 թթ. - ՀԼԿԵՄ Ստեփանակերտի քաղկոմ, տարբեր պաշտոններ, այդ թվում՝ քաղկոմի երկրորդ քարտուղար
1986 թ. - ԽՄԿԿ Ստեփանակերտի քաղկոմի հրահանգիչ
1987-1989 թթ.- Ղարաբաղի մետաքսի գործարանի կուսակցական կազմակերպության ղեկավար
1989-1995 թթ. - երկու անգամ (1989, 1991 թթ.) ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, եղել է Գերագույն խորհրդի նախագահության անդամ
1991-1992 թթ. - ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր
1992-1994 թթ. - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ, ԼՂՀ վարչապետ
1994-1997 թթ. - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ
1997-1998 թթ. - ՀՀ վարչապետ
1998-2008 թթ. - ՀՀ նախագահ
2009 թ.-ից՝ "Սիստեմա" ԲՖԿ (ՌԴ) անկախ տնօրեն:

Այլ տվյալներ
Ծառայել է խորհրդային բանակում:
Արցախի Հերոսի "Ոսկե Արծիվ" շքանշան (ԼՂՀ), "Գրիգոր Լուսավորիչ" շքանշան (ԼՂՀ), Պատվո Լեգիոնի շքանշան (Ֆրանսիա), Մեծ Խաչի Ասպետ
Պատվո Շքանշան (Վրաստան) , Պատվո Շքանշան (ՄՕԿ)
"Վիտաուտաս Մեծ" շքանշան (Լիտվա), Մեծ Խաչի Ասպետ, "Սպիտակ Արծիվ" շքանշան (Լեհաստան),"Փրկչի" շքանշան (Հունաստան), Լիբանանյան մայրու շքանշան (Լիբանան):

Կուսակցական պատկանելությունը
Անկուսակցական

Նախկին վարչապետեր

Սերժ Սարգսյան

Կենսագրական տվյալներ

Տարեթիվ, ամսաթիվ, ծննդավայր
30 հունիսի 1954 թ., ԼՂ, ք. Ստեփանակերտ

Կրթություն
1971 - 1979 թթ. - ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ:

Աշխատանքային գործունեություն
1975-1979 թթ. - Երևանի Էլեկտրատեխնիկական գործարան՝ խառատ
1979-1988 թթ. - ԼԿԵՄ Ստեփանակերտի քաղկոմի բաժնի վարիչ, ապա՝ երկրորդ քարտուղար, առաջին քարտուղար, կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, ԼՂ մարզկոմի առաջին քարտուղարի օգնական
1989-1993 թթ. ղեկավարել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն
1990 թ. - Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր
1993-1995 թթ. - ՀՀ պաշտպանության նախարար
1995-1996 թթ. - ՀՀ պետական անվտանգության վարչության պետ, ապա՝ ազգային անվտանգության նախարար
1996-1999թթ.՝ ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարար
1999-1999թթ.՝ ՀՀ ազգային անվտանգության նախարար
1999-2000 թթ. - ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար
1999-2007 թթ. - ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար
2000-2007 թթ. - ՀՀ պաշտպանության նախարար
2007-2008 թթ. - ՀՀ վարչապետ
2008 թ.-ից՝ ՀՀ նախագահ:

Այլ տվյալներ
Ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Ստացել է Արցախի հերոսի կոչում, ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Տիգրան Մեծ» և «Ոսկե արծիվ» շքանշաններ, պետական այլ պարգևներ: Երևանի պետական համալսարանի խորհրդի և Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահն է:

Կուսակցական պատկանելությունը
Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է 2006 թվականից, 2006 թվականի հուլիսից մինչև 2007 թվականի նոյեմբերը՝ կուսակցության խորհրդի նախագահ: 2007 թվականի նոյեմբերին ընտրվել է ՀՀԿ նախագահ:

Telegram

Don't have Telegram yet? Try it now! >

Lawyers Media Center

721 members

ՀՀ 2-րդ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի փաստաբանական թիմի դիրքորոշումը, կարգաբանումները, արձագանքը լրագրողներին և շրջանառվող հրապարակումներին

VIEW IN TELEGRAM

Preview channel

Lawyers Media Center
121 members

June 27

Lawyers Media Center
Արամ Օրբելյան. Դատարանն ինքն իր համոզմունքն ուներ, որ 300.1 հոդվածով սահմանված նորմը հակասահմանադրական է և դիմել է Սահմանադրական դատարան: Եվ հենց ՍԴ-ն պետք է տա այդ հարցի պատասխանը

https://www.youtube.com/watch?v=uvnLV5WXJdw&feature=youtu.be&fbclid=IwAR1luoDwlSDKTVxYrWpgfipCCfc52pbLPn3aBVuBEHo6-i3OdAtkLqgTE-U

YouTube
«Ֆեյսբուքյան ասուլիս» Արամ Օրբելյանի հետ. 24.06.2019
Մեր ուղիղ հեռարձակումները դիտեք այստեղ՝
http://tv.azatutyun.am «Ազատությունը» սոցիալական մեդիայում
Facebook - https://www.facebook.com/azatutyun/ Twitter - h...

101 edited 11:28

Lawyers Media Center
Արամ Վարդևանյան. Սահմանադրական դատարանի մասին օրենքը մեկ հանգամանք է նշում. եթե դատարանը կայացնում է վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու որոշում, ապա այն պարտավոր է 3-օրյա ժամկետում դիմումը փոխանցել ՍԴ

https://youtu.be/Clpp3Ci_Y90

Lawyers Media Center

121 members

101 edited 1:28

Lawyers Media Center

Արամ Վարդևանյան. Սահմանադրական դատարանի մասին օրենքը մեկ հանգամանք է նշում. եթե դատարանը կայացնում է վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու որոշում, ապա այն պարտավոր է 3-օրյա ժամկետում դիմումը փոխանցել ՍԴ

https://youtu.be/CIpp3Ci_Y90

YouTube

Ռոբերտ Քոչարյանի դիմումները ՍԴ-ում. ի՞նչ սպասել #CivilNet #ՍիվիլՆեթ Սահմանադրական դատարանում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ներկայացուցիչ Արամ Վարդևանյանը ՍիվիլՆեթի Գևորգ Թոսունյանի հետ զրուցում է ...

102 8:20

Lawyers Media Center

121 members

Միհրան Պողոսյանը:

88 14:38

Lawyers Media Center

Հիմք ունենք ենթադրելու, որ գործը դատավորին մակագրվել է խախտմամբ . Արամ Օրբելյան https://www.youtube.com/watch?v=G4E0w7jWwX4&fbclid=IwAR3NP1jc337mdSM0GYzECKyCwT3ZYJdaGUIw5UAkP68-h1x-Itf1WuwmBz4

YouTube

Տեղի է ունեցել մակագրման խախտում. դատավորը պետք է ինքնաբացարկ հայտնի. Օրբելյան

https://www.facebook.com/yerevan.today Կա հիմնավոր կասկած, որ մակագրման հարցում տեղի է ունեցել միջամտությ...

87 16:48

Lawyers Media Center

ՀՀ գլխավոր դատախազին առերևույթ ճիշտ չեն ներկայացրել Սահմանադրական դատարանի որոշումը. Արամ Վարդևանյան

https://168.am/2019/06/12/1135240.html

168 ԺԱՄ

«Գլխավոր դատախազին առերևույթ ճիշտ չեն ներկայացրել Սահմանադրական դատարանի ո...

Այսօր ՀՀ գլխավոր դատախազը հրապարակայնորեն հայտնեց կարծիք Դատար...

86 16:54